Azg
Azg

Յուլիս 3 Շաբաթ 1993

ՈՍՄԿՎԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
9 տարի թիվ 125 (376)
գինը 10 ռ
դասի 59149
Երևան 375010
Հանրապետության 47
հեռ. 58184 ֆաքս 562941
տելեքս 242266 CPIRI SU

Վերլուծություն

Արաբ-իսրայելական բանակցությունները առարկություն

Վաշինգտոնում երեկ վերջ գտավ արաբ-իսրայելական բանակցությունների 10-րդ փուլը, առանց շոշափելի արդյունքների: Պետքարտուղար Քրիստոֆերը ժողովից հետո պաշտոնապես հայտարարեց Իսրայելի տեսակետը, մեղադրելով պաղեստինցիներին՝ որ կարգավիճակային ամենավերջին հարցը Արևելյան Երուսաղեմն արաբներին վերադարձնելու պարագան, դրեցին բանակցությունների ներկա հանգրվանի օրակարգում: Այնինչ, ինչպես հայտարարվեց Երուսաղեմից, իսրայելացիներն այդ հարցը համարում են «հավիտենապես փակված»: Պետքարտուղարը հայտնեց նաև, թե իր համար անակնկալ չէր երկու կողմերի դանդաղկոտությունը ամերիկյան նախագծի ընդունման հարցում: Նախագիծը վերաբերում էր պաղեստինցիների ինքնակառավարմանը: ■

Քաղաքական

Քաղաքական բակարդ թուրք զինվորների դեմ

Թուրքիայի հրաբխային շրջանում, Ալլաղի գյուղի մոտակայքում, հրդեհի բանվորական կուսակցության (PKK) մարտիկները երեկ բակարդեցին թուրք բանակայինների շարասյանը, սպանելով 11 զինվոր: Ըստ PKK-ի, թուրք բանակայինները պատրաստվում էին ծերբակալություններ անել գյուղում: Թուրական աղբյուրների համաձայն զոհեր են տվել նաև հրդեհները: Մյուս կողմից, էվեյցարական իշխանությունները պահանջեցին դիվանագիտական անձեռնմխելիություն հանել Բեռնում Թուրքիայի դեսպանատան 3 աշխատողների վրայից, անցյալ շաբաթ հուդ ցուցարարների վրա կրակելու կապակցությամբ դատական քննության ենթարկելու համար նրանց:

Գերմանացի զինվորներ Սոմալիում

2-րդ աշխարհամարտից հետո առաջին անգամ գերմանացի զինվորները կծառայեն երկրից դուրս: Գերմանիայի խորհրդարանը երեկ ճնշող մեծամասնությամբ վավերացրեց ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի շարքերում 1700 զինվոր Սոմալի ուղարկելու որոշումը: Մյուս կողմից, Սոմալիի մայրաքաղաք Մոգադիշիոյում սպանվեցին 3 եւ վիրավորվեցին 8 իտալացի զինվորներ այն պահին, երբ զենք էին փնտրում զենքերալ Այդիդի կողմնակիցների թաղամասում: Համալրում ստանալով, իտալացիները հակադարձեցին եւ սպանեցին առնվազն 8 մարդ:

ԱՄՆ-ը փակում է 100-ից ավել ռազմակայաններ

Նախագահ Քլինթոնը երեկ հրամանագրեց ավելի քան 100 ռազմակայանների փակման որոշումը: Դրանցից 92-ը գտնվում են արտասահմանում, գլխավորապես Գերմանիայում: Հրամանագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է Կոնգրեսի վավերացումը: Այնուհանդերձ, ինչպես հայտարարվեց Պենտագոնից, դրանից Մ. Նահանգների պաշտպանական բյուջեն կնվազի հազիվ 20 միլիարդով, հասնելով տարեկան 270 միլիարդի:

Իսլամ շեյխը կալանքի տակ

Մ. Նահանգների արդարադատության բաժանմունքը որոշեց կալանքի տակ առնել Նյու Յորքում բնակվող շեյխ Օմար Աբդել-Ռահմանին, որի հետևորդները, ըստ ամերիկյան աղբյուրների, կազմակերպել էին Նյու-Յորքի առեւտրական կենտրոնի ոչնչացումն ու ամբեկչական այլ գործողությունները Ամերիկյան իշխանությունները եգիպտոսից արտաքսված կուր շեյխի ծերբակալման համար հիմք են ծառայեցրել Մ. Նահանգներ ներգաղթելու նրա փաստաթղթերի անճշտությունները:

ՀԱՀ-ում բազմացեղային ընտրություններ 1994-ին

Հարավ Աֆրիկյան հանրապետության սեւամորթ եւ սպիտակամորթ 21 կազմակերպություններ երեկ որոշեցին երկրում բազմացեղային սկզբունքով առաջին ընտրությունների թվականը՝ 1994 թ. ապրիլի 27: Որոշմանը դեմ կանգնեցին միայն 2 կազմակերպություններ՝ զուլուներինը եւ պահպանողականները: Ենթադրվում է, սակայն, ժողովրդի մեծամասնությունը պիտի գնա ընտրությունների, քանի որ դրանց սպասում են արդեն 340 տարի շարունակ: ■

Հարաբաղ

ԿԱՏԱՂԻ ՄԱՐՏԵՐ ՀԱԴՐՈՒԹԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հարավային ռազմաճակատից հակասական լուրեր

Երեկ վաղ առավոտյան իրադրությունը կտրուկ սրվեց Լեռնային Ղարաբաղի հարավային ռազմաճակատներում: Առավոտյան մոտ 6-ին Աղդերեջանի Ֆիզուլու շրջանի եւ Հադրութի շրջանի հարավային գրավված հատվածի ռազմական հենակետերից հակառակորդը լայնածավալ գրոհ ձեռնարկեց Հադրուտ շրջկենտրոնի ուղղությամբ: Հարձակումը տրին նախորդել է ուժգին հրետանային նախապատրաստություն, ընթացավ միաժամանակ երկու ուղղություններով՝ հարավ-արևմուտքից եւ արեւելքից: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ՍՂՈՅԱՆԸ՝ վկայակոչելով ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբից ստացված տեղեկությունները: Մեծ մարտերից հետո հայկական ուժերին հաջողվել է լիովին կասեցնել թշնամու գրոհը եւ առավոտյան ժամը 9-ի տվյալներով, հակառակորդին ետ շպրտել նախնական դիրքեր: Կան երկուստեք կորուստներ, որոնց թիվը ճշտվում է: Կեսօրվա տվյալներով, մարտերն ընթանում էին Հադրութի եւ Ֆիզուլու շրջանների սահմանագծում:

Ղարաբաղի հարավային ռազմաճակատներում լարվածության կտրուկ աճի առթիվ Ինտերֆաքս գործակալությունը Ստեփանակերտից ստացված տվյալների վրա հենվելով հաղորդում է, թե երեկ վաղ առավոտյան ադրբեջանական կրակավարումներն ռազմական հիմնարկների և գրանատնիկների ակտիվության աստիճանի բարձրացմամբ սկսվեցին գրոհ են ձեռնարկել Հադրութի շրջանի ուղղությամբ: Ադրբեջանական ուժերին հաջողվել է ճեղքել հայկական պաշտպանական շրջանը եւ գրավել Հադրուտ շրջկենտրոնի մոտ գտնվող Մեղրիաձոր, Ներքին Հանդաբերդ, Մեղրիաձոր եւ Ներքին գյուղերը: Մարտերի ընթացքում ըստ նույն աղբյուրների, ոչնչացվել է հակառակորդի մեկ տանկ եւ երկու հետեւակի մարտական մեքենա: Առավոտվա կողմից մեր ուժերը գրավել են Հադրուտի եւ Ֆիզուլու շրջանների սահմանագծում գտնվող բարձունքներ: Հադրուտի եւ Ֆիզուլու շրջանների սահմանագծում: Մարտերի ընթացքում ըստ նույն աղբյուրների, ոչնչացվել է հակառակորդի մեկ տանկ եւ երկու հետեւակի մարտական մեքենա: առգրավվել մեկ

ԼՂՀ կառավարության հայտարարությունը

Երեկ ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեն նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանրապետության կառավարության անունից հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ընդգծվում է, թե երեկ վաղ առավոտյան ադրբեջանական օդուժի գրոհային ինքնաթիռների ռմբակոծումներից հետո ադրբեջանական կազմավորումները հրետանու եւ տանկերի աջակցությամբ լայնածավալ գրոհ են ձեռնարկել Հադրութի շրջանի ուղղությամբ: Այս մասին հաղորդում է ՍՆարՓ գործակալությունը: Ադրբեջանական ուժերին հաջողվել է ճեղքել հայկական պաշտպանական շղթան եւ գրավել շրջանի Բլուրաշ, Ցոր, Մելիքաշեն եւ Շամձոր գյուղերը, ինչպես նաեւ Մարտակերտի շրջանի Փափրավենդ գյուղը:

Հայտարարության մեջ նշվում է նաեւ, որ Ադրբեջանի նոր ագրեսիային նախորդել են Ադրբեջանի դեմ վարների ելույթները, որոնք կոչ էին անում ամբողջ ուժերն ուղղել դեպի Ղարաբաղյան ճակատ: Ղարաբաղի սահմանների ապահովությամբ ուժեղ ցուցադրական կենտրոնացումն ու արտգործնախարարության հանձնախումբ հայտարարությունը բավականին դեռեւս կարելի է վկայում են Ադրբեջանի ղեկավարության մտադրությունների մասին: Ինչ կանավորությունը ղեկավարելով Լեռնային Ղարաբաղի բանակցությունների ավարտման, ծեռնարկում է ուժգին միջոցներ ագրեսորին սանձելու ուղղությամբ: Հայտարարության մեջ ասվում է նաեւ, թե ռազմական գործողությունների հետեւանքների հետեւանքով հայտնություն բերվում է Արցախի իշխանությունների վրա:

ԱՐՍԵՆ ՊՐԵՍԻՏՍՈՅԱՆ

Տնտեսություն

Շեւարդնածեին լրացուցիչ լիազորություններ

Խորհրդարանը երեկ օժտել է Վրաստանի դիկտատոր Եդուարդ Շեւարդնաձեին լրացուցիչ լիազորություններով՝ նրան հանձնարարելով [illegible] Ռուսաստանի հետ [illegible] ծառայությունից: Հայկական ուժերը դիմել են դատախազական գործողությունների: Միաժամանակ հրաժարականի է գրել նաեւ Վարդենիսի շրջանի Փոքրաբակ գյուղի [illegible] Այստեղ նույնպես տուժածներ չեն եղել:

Երեկ հետո ադրբեջանական աղբյուրներ հաղորդում էին, թե երեկ եւ նախորդ օրերին Հայաստանի տարածքից հրետակոծվել են Ադրբեջանի Գեյչայի, Ղազախի եւ Զանգելանի շրջանների սահմանամերձ գյուղերը, որի հետեւանքով կան զոհեր եւ տուժածներ: Տուժածների մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

«Ազգ»

Էստոնիայի [illegible] բարությունը

Էստոնիայի [illegible] ինքնավարության [illegible] մարդու իրավունքների [illegible] կազմակերպությամբ [illegible] ուղղված [illegible] հարցումը [illegible] ֆամտությունը [illegible] ժողովրդավարական [illegible] ազատությունը [illegible] խորհրդարանի վերի [illegible] ուղղված չդատապարտված հարցումներ»:

Վերլուծություն

Արեւմուտքի օգնությունը սահմանափակ

Ֆրանսիան կոչեցեց տարբեր ձեւերով նպաստել Ռուսաստանի տնտեսության վերածնանքին եւ հնարավոր է համարում ավելացնել օգնությունը, սակայն այն [illegible] Նոր Յորքյանի բոլոր եկեղեցիները [illegible] են արտում: Արեւմուտքի կողմից առասական բարեփոխումներին ցույց տվող օգնության մակարդակը կտրուկ մանափակվել է: [illegible] մասին հայտարարեց Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը նախագահի լրագրողներին տված հարցազրույցում:

Ռուսական բարեփոխումներին աջակցելու գործում ԱՄՆ-ի ավանդը սկզբունքորեն համեմատելի համարելով Եվրոպայի օգնության հետ, Միտերանը հավելեց, որ [illegible] ստույգ հայտնի չէ նախագծված օգնության գումարը [illegible] վստահ է, որ այն հասանելի չի նվազագույն միավորումներ [illegible] հետ:

Նշանակալի նախադեպի հանդես գալով, որ Փարիզում ակնկալում էին Վաշինգտոնը եւ Տոկիոյին առավել [illegible] ոլորտում [illegible] ԱՄՆ-ը այդ [illegible] լրացուցիչ [illegible]

ԱՐՍԵՆ ՊՐԵՍԻՏՍՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՈՒԿ

Հանրաքեցական վարչությունում

Ռամկավար ազատական կուսակցության Հանրաքեցական վարչության հուլիսի 1ի նիստում քննարկվեց հանրաքվեության հաղորդական վիճակը: Այդ խնդրի շուրջ նկատառումներ հայտնեցին առանձին բնագավառների հրավիրված մասնագետները. Գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Գեորգ Պողոսյանը, ներկայացնելով կուսակցությունների օբյեկտիվ վերջին ուսումնասիրությունների արդյունքները, նշեց, որ ներկա դրությամբ առավել ճանաչված հասարակական-քաղաքական կազմակերպությունները չորսն են՝ ՀՀՇ, ՀՅԴ, Կոմկուս եւ ՀՌԱԿ: Ըստ նրա, անհանգստացնող են որոշ ցուցանիշներ՝ բնակչության 60 տոկոսը ոչ մի կուսակցության նախապատվություն չի տալիս, 80 տոկոսը «ուժեղ ձեռքի» կողմնակից է: Իսկ դա նշանակում է, որ դեռեւս մեծ է ավտորիտար պետության առաջացման վտանգը: Պրն. Պողոսյանը ժողովրդավարության հաստատման եւ ամրապնդման միակ երաշխիքը ուժեղ կուսակցությունների գոյությամբ պայմանավորեց: Քաղաքագետ Ալեքսանդր Թադեւոսյանը ներկայացնելով Հայաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների վիճակը, ընդգծեց, որ հանրաքվեության ջանքերը հիմնականում ուղղված են համաշխարհային գործընթացներում ներգրավվելու ու ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ, եւ որ այժմ շոշափելի արդյունքներ գրանցվել են միայն շրջանի եւ ԱՊՀ երկրների հետ հաղորդակցության մասնագետներում:

Իրավաբան Արմեն Հարությունյանը անդրադարձավ ՀՀ Գխ սահմանադրական հանձնաժողովի մշակած սահմանադրությանը: Նա նշեց, որ հիմնական օրենքի այդ տարբերակն ամբողջովին միտված է ամբողջ իշխանությունը ՀՀ նախագահի ձեռքում կենտրոնացնելուն: Դա վտանգավոր համարելով, պրն. Հարությունյանը գտավ, որ ընդդիմությունը պետք է միավորվի այն չընդունելու եւ ժողովրդավարական տարբերակ ստեղծելու համար:

Վարչության փոխտեղեկատու Կարեն Կոսանդոյանը տեղեկացրեց վերջերս ԱԻՄ-ի ղեկավարների հետ կուսակցական ներկայացուցիչների ունեցած հանդիպման մասին, որի ժամանակ նրանք առաջարկել են միանալ հուլիսի 7-ից իրենց կողմից ՀՀ նախագահի հրաժարականը, ՀՀ Գերագույն խորհրդի ցրումը եւ պետխորհրդի ստեղծումը պահանջելու նպատակով կազմակերպվող տեսական ցույցին:

Վարչությունը հաշվի առնելով, որ ներկա քաղաքական վիճակում նման ձեռնարկումները միայն շեղում են ժողովրդի ուշադրությունը եւ ջլատում կուսակցությունների ուժերը, ԱԻՄ-ի նախաձեռնությանը մերժողական պատասխան տվեց:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Պատերազմ

ՂԱՐԱԲԱՂԻ ՀՅՈՒՍԻՍՈՒՄ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆԱՆՈՒՄ Է

Հաջորդը կարող է հարավը լինել

Անցած շաբաթը Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների առումով խիստ լարված էր: Դեռեւս հունիսի 27-ին ադրբեջանական կազմավորումները փորձեցին լայնածավալ գրոհ սկսել Մարտակերտի եւ Ասկերանի շրջանների ուղղությամբ՝ որոնց հենակետ ունենալով Աղդամի շրջանի ռազմական բազաները. սակայն ԼՂՀ պաշտպանության բանակի ուժերին հաջողվեց կասեցնել թշնամու գրոհները, այլեւ անցնել հուժկու հակահարձակման եւ օրվա երկրորդ կեսին ազատագրել Մարտակերտ շրջկենտրոնը: Նույն օրը ադրբեջանական կազմավորումները Մինգեչաուրի շրջանից F-200 «երկիր-օդ» տիպի հրթիռներ արձակեցին Ղարաբաղի ուղղությամբ, սակայն դա արդեն չէր կարող ազդել Մարտակերտի շրջանի ռազմական գործողությունների վրա, եւ կասեցի մարտերից հետո ադրբեջանական բանակը ստիպված էր նահանջել նաեւ Մարտակերտի շրջանի Մատաղիս, Լեռնաշեն եւ Մաղավուզ գյուղերից: Նահանջելով՝ ադրբեջանական ուժերն ամրացնվեցին շրջկենտրոնից մի քանի կիլոմետր դեպի հյուսիս-արեւելք գտնվող դիրքերում եւ արդեն հաջորդ օրը՝ հունիսի 28-ին փորձեցին անցնել լայնածավալ հարձակման այն բանից հետո, երբ գնդապետ Սուրաբ Հուսեյնովն իր ենթակայության տակ գտնվող սնորաբաժանումներից մի քանին ուղարկեց օգնության: Սակայն այս անգամ եւս ԼՂՀ պաշտպանության բանակի ուժերին հաջողվեց կասեցնել գրոհը եւ հակառակորդին ետ շպրտել նախնական դիրքերը: Այդ ընթացքում հայկական ուժերը լոեցրին թշնամու կրակակետերը նաեւ Մարտակերտ-Աղդամ ավտոմայրուղու վրա գտնվող Բոյահմեդլի գյուղում:

Ադրբեջանը շտապեց Ղարաբաղի ռազմաճակատներում կրած հերթական անհաջողությունը բացատրել Հայաստանի ռազմական մեծ աջակցությամբ՝ հայտարարելով, թե հունիսի 27-ին Լաչինի եւ Քելբաջարի շրջանների տարածքով Ղարաբաղ է տեղափոխվել շուրջ 20 միավոր ռազմական տեխնիկա եւ կենդանի ուժ: Ուստի պատահական չէ, որ անմիջապես հաջորդ օրն ադրբեջանական ուժերը գրոհ ձեռնարկեցին Կրասնոսելսկի շրջանի Ջիլ գյուղի հայկական պաշտպանական դիրքերի ուղղությամբ եւ սկզբում նույնիսկ գրավեցին պահակակետերից մեկը, սակայն ընդամենը մի քանի ժամ անց ստիպված էին նահանջել՝ մարտադաշտում թողնելով 38 սպանված եւ մոտ 60 վիրավոր: Պատահական չէր նաեւ Քելբաջարի շրջանի հիշատակումը՝ նույն օրը Դաշքեսանի շրջանի տարածքից հրետակոծվեցին Քելբաջարի հյուսիսում գտնվող հայկական պաշտպանական դիրքերը: Միաժամանակ ադրբեջանական քարոզչական մեքենան շտապեց ամբողջ աշխարհին հայտարարել, թե հայերը նոր ճակատ են բացում Գետաբեկի շրջանի ուղղությամբ, իսկ Ղարաբաղի ուժերը գրավել են Աղդամ քաղաքի մեծաքանակ բոլոր գյուղերն ու առաջ են շարժվում դեպի արեւելք՝ Աղջաբեդիի ուղղությամբ: Փորձելով Ղարաբաղում ռազմական գործողությունների ուժգնացման հերթական փուլը ներկայացնել որպես հայկական նոր հարձակում, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, թե հայկական կանոնավոր ուժերն արդեն հասել են Շահումյանի շրջանի բնակավայրերը, մինչդեռ հայտնի է, որ այդ շրջանի հարավային գյուղերը (մասնավորապես Գյուլիստանը) վաղուց արդեն գտնվում են հայկական հայդուկային խմբերի հսկողության տակ:

Շաբաթվա երկրորդ կեսին Ղարաբաղի հյուսիսային ռազմաճակատներում նկատվել է լարվածության որոշ թուլացում այն առումով, որ ռազմական անմիջական գործողություններ չեն ընթացել, թեեւ ադրբեջանական կազմավորումները շարունակում էին ինչպես Աղդամի շրջանի, այնպես էլ Մարտակերտի հյուսիսարեւելյան մասի հենակետերից հրետակոծել սահմանամերձ գյուղերն ու հայկական պաշտպանական դիրքերը: Անցյալ շաբաթ Ղարաբաղի եւ Ադրբեջանի ռազմական ղեկավարների միջեւ ձեռք է բերվել ռազմական ակտիվ գործողությունները դադարեցնելու համաձայնություն, որը թեեւ ընդհանուր առմամբ կատարվել է, սակայն շարունակվող հրետակոծումներն ու ադրբեջանական բանակի լուրջ կուտակումներն առաջացուցում են, որ ադրբեջանական կողմը ժամանակավոր դադարն ամենայն հավանականությամբ կօգտագործի ուժերի վերադասավորման եւ նոր հարձակումներ նախապատրաստելու նպատակով: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարավային՝ Մարտունու եւ Հադրութի շրջաններին, առայժմ այստեղ անցած ամբողջ շաբաթ սահմանամերձ գյուղերն ու հայկական դիրքերը ենթարկվել են պարբերական հրետակոծումների, եւ թեեւ անմիջական ռազմական գործողություններ չեն ընթացել, այնուամենայնիվ ադրբեջանական բանակի շարունակվող կուտակումները վկայում են, որ անհաջողություն կրելով Ղարաբաղի հյուսիսում՝ Ադրբեջանն ամենայն հավանականությամբ կփորձի հատուցել դա հարավային ճակատներում:

Մի խոսքով, ռազմական առումով անցյալ շաբաթվա կարեւորագույն իրադարձությունը Մարտակերտ շրջկենտրոնի ազատագրումն էր, որով փաստորեն ազատագրվեց Ղարաբաղի հյուսիսի լեռնային եւ նախալեռնային ամբողջ հատվածը: Դրանով իսկ ԼՂՀ պաշտպանության բանակի ուժերը ադրբեջանական բանակին զրկեցին բուն Ղարաբաղի տարածքում վերջին խոշոր հենակետերից եւ լավ նախադրյալներ ստեղծեցին եթե ոչ ամբողջ շրջանն ազատագրելու, առայժմ գոնե հեռագա տարածքային-կորուստներից խուսափելու համար՝ բռնամուն ետ շպրտելով շրջանի դաշտային մասը: Ինչ վերաբերում է իրադարձությունների հետագա հնարավոր զարգացմանը, առայժմ ադրբեջանական ուժերը հազիվ թե առաջիկայում փորձեն վերադարձնել կորցրածը Մարտակերտի շրջանում: Ամենայն հավանականությամբ հաջորդ հարվածն ուղղված կլինի Ղարաբաղի հարավային շրջաններին, որոնք ընդհանուր առմամբ բնականոն կյանքով ապրող շրջաններ են եւ դեռեւս չեն վերածվել պատերազմի խանձված տարածքների: Երբ ավելացնենք նաեւ, որ Ֆիզուլու եւ Ջեբրայիլի շրջանների հենակետերը շարունակ ամրացնվում եւ համալրվում են, իսկ Ղուբաթլիի տարածքից վերջին օրերին ուժգին հրետակոծության են ենթարկվում Գորիսի շրջանի սահմանամերձ գյուղերը, առայժմ կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ առաջիկայում ռազմական գործողությունների ծանրության կենտրոնը Ղարաբաղի հյուսիսից կտեղափոխվի հարավ:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Քաղաք

Ալիեւի պաշտոնականությունը հակասահմանադրա՞կա՝

Ադրբեջանի նախարարի լիազորությունների փոխանցումը Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիեւին հակասահմանադրական է եւ անօրինական, Բաքվում կայացած ասուլիսի ժամանակ ասել է Մուսավաթ կուսակցության նախագահ, Գերագույն խորհրդի նախկին նախագահ Իսա Ղամբարովը: Մուսավաթը մտադիր է, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը եւ կուսակցության հնարավորությունները, «պայքարել օրինական իշխանության եւ կառավարման պրեզիդենտական ձեւի վերականգնման համար: Ելնելը, ըստ Ղամբարովի, մեջլիսի որոշումը չեղյալ հայտարարելն է, էլչիբեյի վերադարձը Բաքու եւ նրա բանակցությունները հանրաքեցության նոր ղեկավարության հետ:

ԵՏ

Մամուլը բողոքում է գրաքննության դեմ

Ադրբեջանական «Սվոբոդա» թերթի խմբագրությունը մեղադրում է Ադրբեջանի իշխանություններին հանրաքեցության ազգաբնակչության քաղաքացիական իրավունքները խախտելու մեջ: Թերթը հրապարակել է դիմում միջազգային հանրությանը եւ հանրաքեցությունում արտասահմանյան երկրների դեսպանատներին: Փաստաթղթում նշվում է, որ ստեղծման առաջին օրից ի վեր թերթը պաշտպանում էր անկախ ու ժողովրդավարական Ադրբեջանի կառուցման գաղափարը: Բայց, տեսնվում է հայտարարության մեջ, պետական հեղաշրջման հետեւանքով իշխանության եկած ուժերը գրաքննություն մտցնելով զրկում են թերթը սեփական սկզբունքները պաշտպանելու հնարավորությունից:

ԵՏ

Արդյունաբերողների եւ ձեռներեցների միության հիմնադիր ժողով

Ենթադրվում է, որ այն պետք նպաստի անդամ ձեռնարկությունների արտադրական, գիտատեխնիկական, նյութաֆինանսական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործմանը եւ աղտոտվի խոշոր նախագծերի անկախ փորձաքննությունը:

ԵՏ

Արգելված է մեկնել արտասահմանյան գործուղումների

Ադրբեջանի ղեկավար օղակի պաշտոնական անձանց միաժամանակ արգելվել է մեկնել արտասահմանյան գործուղումներ: Այդ մասին է հաղորդում Խաբար-Սերվիսը, կառավարության լավատեղյակ աղբյուրներից: Իրավապահ մարմինների որոշ աշխատակիցների կարծիքով, պատճառն այն է, որ նախկին ղեկավարները բազմիցս փորձել են լքել հանրապետությունը:

ԵՏ

Դիտակ

Առաջարկում են ուկրաինացի օդաչուին փոխանակել հայ գեներալի հետ

Ինչպես հաղորդեցին «Պոստֆակտում» գործակալության թղթակցին Ուկրաինայի պաշտպանության նախարարությունում, «Ուկրաինայի ազգային ասամբլեան» դիմել է կառավարությանը, առաջարկելով ուկրաինացի օդաչու, կապիտան Յուրի Բելիչենկոյին փոխանակել գեներալ-մայոր Վիլեն Մարտիրոսյանի հետ: Բելիչենկոն, որը կռվում էր ադրբեջանական բանակի շարքերում, կատարել էր յոթ մարտական թռիչք, խփվել էր եւ գերվել հայկական զորամիավորումների կողմից: Գեներալ-մայոր Վ. Մարտիրոսյանը ուկրաինական խորհրդարանի պատգամավոր է, զինվորականների՝ սոցիալական պաշտպանվածության հարցերով խորհրդարանական հանձնաժողովի նախագահ:

ԵՆ

TV

Տիգրան Հակոբյանի համար հասակ չեն պետական շահերի սահմանները

Ինչու չծեւավորվեն մեր հեռուստատեսության զարգացման հիմնադրույթները, մենք Հայաստանի հեռուստատեսություն չենք ունենա: 3100 աշխատող ունեցող Հայաստանի հեռուստառադիոընկերության պետ Տիգրան Հակոբյանն այսպես բնորոշեց հայկական հեռուստատեսության առաջան երեկ կայացած ծանուցի ասուլիսում: Ընդամենը երեք ամիս է նա անցել է իր պաշտոնությունների կատարմանը, եւ նա մի քանի ամիս է պահանջում, որպեսզի երեւան հեռուստատեսությունում կատարվող փոփոխությունների արդյունքները: Երեք տարվա մեջ լինելով հեռուստառադիոընկերության 4-րդ պետը, նա նշեց, որ ի տարբերություն այլ ոլորտների, հեռուստատեսությունը չդիմացավ ղեկավարների արագ փոփոխություններին:

Այժմ այդ համակարգը գտնվում է ֆինանսատեխնիկական, հոգեբանական, կադրային խնդիրների առջեւ, թեեւ այժմ հեռուստատեսությունը տալիս է 1 մլրդ 800 մլն ռուբլի, բայց ունի ընդամենը 5 տեսախցիկ:

Արդեն փոփոխություններ են կատարվել ստեղծագործական միավորումների աշխատանքներում, նրանց ֆինանսավորման եւ թեմատիկ ուղղությունները կենտրոնացնելու ճանապարհով:

Այս կարեւոր խնդիրը Տիգրան Հակոբյանը համարեց լեզուն: Տեխնիկական պատճառներով, առայժմ հնարավորություն չկա, որպեսզի հայկական հեռուստատեսությամբ ցուցադրվող բոլոր հաղորդումները, հատկապես գեղարվեստական ֆիլմերն ու մուլտֆիլմերը հնչեն հայերեն: Միայն վերջերս 8 մլն ռուբլու կրկնօրինակման սարքեր են գնվել: Անդրադառնալով հեռուստատեսային եթերի ուղղվածությանը, վարչության պետը հայտարարեց, թե այն պետք է զբաղվի պետական գաղափարախոսության քարոզչությամբ: Մակայն, նա ասելով, «մինչեւ հիմա չգիտենք, թե որոնք են խոսքի ազատության սահմանները»:

«Հեռուստատեսությունը ոչ մնկին չի ծառայում», հավաստիացրեց նա: Նա նաեւ հայտարարեց, թե ինքը երբեք թույլ չի տա, որ խոսքի ազատության տակ հասկացվի այս կամ այն նախարարին հայհոյելը: Մեր այն հարցին, թե այդ դեպքում ինչպես հասկանալ, երբ իշխանությունները իրենք են հայհոյում ընդդիմությանը, նա պատասխանեց, թե ինքը պետական այր է եւ շարժվում է կառավարության օրենքներով: Նա կարծիքով, պետությունը չպետք է ծառայի առանձին կուսակցության: «Եթերում պետք է լինի պետական շահերի պաշտպանություն, եւ հեռուստատեսությունը պետք է սահմանափակ լինի ընդդիմության համար»:

Բայց որո՞նք են այդ շահերի սահմանները, կրկին հարցրեցի վարչության պետին:

«Կրկնեմ, որ ինքս դեռ չեմ հասկացել այդ պետական շահերի սահմանները», ասաց պրն. Հակոբյանը եւ նշեց, որ ամեն մարդ չպետք է բարոյական իրավունք ունենա եթերում երեւալ: «Ես սկզբունքային կլինեմ եւ թույլ չեմ տա, որ ֆաշիստական գաղափարախոսությունը եթեր մտնի, որովհետեւ ոչ մի պետություն բռնական տարրերին եթեր չի տալիս, իսկ այդ գաղափարախոսությունը ներկայացնում են բռնական տարրը, ասաց նա»:

Իսկ այն հարցին, թե արդյոք հեռարձակ հաղորդումներ պատրաստելու համար կա՞ն համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող լրագրողներ, նա նշեց, որ հեռարձակ անձնավորություններ կան, բայց նրանք համագործակցում են արտասահմանյան գործակալությունների հետ: Չկա հեռուստատեսային լրագրության ամբիոն, եւ հիմա պատրաստվում են դասընթացներ կազմակերպել: Տիգրան Հակոբյանն ասաց նաեւ, սերնդափոխություն չի կատարվում:

Մի խոսքով, վարչության պետը հույս հայտնեց, թե հայկական հեռուստատեսությունը պետք է այնպիսի հաղորդումներ թողարկի, որ բնակչությունն այդ ժամերին միայն հայկական հեռուստատեսություն դիտի:

ՀԱԿՈԲ ՍԱՍԱՐՅԱՆ

Ինչպես հայտնել է ՀՀ վառելիքի եւ էներգետիկայի նախարարության Գիտության եւ կանխատեսման վարչության գլխավոր մասնագետ Ալեքսանդր Քոչարյանը, հուլիսի 8-ին սպասվում է ֆրանսիական «Էլեկտեսիսե դը ֆրանս» պետական ընկերության ներկայացուցիչների ժամանումը Երեւան: Այցի նպատակը Հայաստանի գործող եւ գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած փոքր ՀԷԿ-երի ուսումնասիրումն է. ՀԷԿ-երի աշխատանքի արդյունավետությունը, առաջին հերթին՝ դրանց ՕԳԳ-ն բարձրացնող հանձնարարականների հետագա մշակումը: Մասնագետները ժամանելու են ֆրանսիական «7-ը դեկտեմբերի 1988 թ.» ասոցիացիայի նախաձեռնությամբ: ԵՏ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թ. հունիսի 30-ի թիվ 295 կարգադրությամբ ՀՀ փախստականների հարցերի պետական վարչությունը հատկացրել է 120 միլիոն ռուբլի՝ փախստականներով-խառնաբնակ վայրերում նրանց տներն ու տնակները 1993-94 թ. ձմռանը նախապատրաստելու, ինժեներական հաղորդակցությունները կառուցելու համար: Այդ գումարը տրամադրվել է 1993 թ. էմիսիայի միջոցների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահեստային ֆոնդի հաշվին:

ՀՀ ԿԼՏ

digitised by A.R.A.R.@

Պյաստիգորսկ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆՏԱՐԲԵՐ ՉԻ ՄՆԱ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Վերջերս Պյաստիգորսկում ավարտվեց «Հակամարտությունների կանխումը եւ լուծումը» թեմայով ղարաբաղյան սեմինարը, որ անց էր կացվում «Միջազգային տագնապ» հասարակական կազմակերպության հովանավորությամբ (այս կազմակերպության կենտրոնական բյուրոն գտնվում է Լոնդոնում): Սեմինարին մասնակցում էին գիտնականներ (քաղաքագետներ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ), ինչպես նաեւ Հյուսիսային Կովկասի ոչ ֆորմալ միությունների ղեկավարներ: Սեմինարում Հայաստանը ներկայացնում էր ՀՀ ԳԱ փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող ՕԼԵԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ: Նոյյան տաղան գործակալության թղթակից Սուսաննա Պետրոսյանը դիմեց նրան հետեւյալ հարցերով.

- Ի՞նչպե՞ս անցավ սեմինարը, ո՞րն էր նրա հիմնական նպատակը:

- Սեմինարի հիմնական նպատակը տարբեր հակամարտությունների (քաղաքական, տնտեսական, կենցաղային, բնապահպանական եւ այլն) կանխարգելման եւ լուծման համար ձեռնարկվող միջոցառումներին ծանոթանալն էր: Պարադոքսալ-սեմինարի ընթացքում ներկայացվեցին ղարաբաղյան եւ օս-ինգուշական հակամարտությունների լուծման իրավիճակները: Պարադոքսներին «մարզիչները» ծավալում էին սեմինար վարելու լավ մշակված մեթոդիկա: Մյուս մասնակիցներն առաջարկեցին հակամարտությունների որոշման եւ լուծման երբեմն անսովոր տարբերակներ:

- Ի՞նչ սկզբունքով են ընտրվել սեմինարի մասնակիցները:

- Հիմնականում Պյաստիգորսկ հրավիրվել էր երիտասարդությունը, այսինքն նրանք, ովքեր վաղը երջանի խնդիրների լուծման քաղաքականությունը կորոշեն եւ կազդեն դրա վրա: Հայաստանի մասնակցության անհրաժեշտությունը նմանօրինակ հանդիպումներին թելադրված էր հետեւյալ հանգամանքներով. նախ եւ առաջ Հյուսիսային Կովկասի իրավիճակը չի կարող չհետաքրքրել Հայաստանին այն պատճառով, որ այնտեղ հայկական հոծ բնակչություն է ապրում (այդ թվում եւ փախստականներ): Երկրորդ՝ արդեն առաջացած հակամարտությունները, մասնավորապես վրաց-աբխազականը, անմիջականորեն ազդում են Հայաստանի իրավիճակի վրա:

- Ի՞նչ կասեք ներկայումս Հյուսիսային Կովկասում կատարվող գործընթացների եւ առաջին հերթին, հայ համայնքի վիճակի մասին:

- Սեմինարում ստացված տեղեկության հիման վրա կարելի է հետեւյալ եզրակացությունների հանգել: Կազակությունը համասեռ չէ: Ներկայումս այնտեղ բարդ գործընթացներ են տեղի ունենում: Կազակները եւ մնացյալ ռուս բնակչությունը դուրս են մղվում Հյուսիսային Կովկասի այն տարածքներից, որտեղ նրանք քույլ են եւ փոքրաթիվ: Սրա հետեւանքով հետեւյալ միտումն է նկատվում. կառավարող կառուցվածքներ են գալիս արմատականորեն տրամադրված ղեկավարներ: Համընդհանուր դժգոհության մթնոլորտ է ձեւավորվում, որը կարող է ուղղվել նաեւ հայերի դեմ: Առաջին ընդհարումներն արդեն եղել են: Իմ կարծիքով, այս խնդիրների լուծումը կախված է համատեղ տնտեսական նախագծերի ստեղծումից եւ դրանց իրականացումից, փախստական հայերի, ռուսների, կազակների խնդիրների համատեղ լուծումից: Այս երջանի հայությունը լուրջ կարողություններ ունի, բայց թերագնահատում է հայկական ներկայացուցչություն ստեղծելու անհրաժեշտությունը: Ոչ միայն երջանում Հայաստանի քաղաքականության, այլեւ դրա իրականացման մեխանիզմների մշակման, այսինքն, պատշաճական ներկայացուցչության ստեղծման խիստ անհրաժեշտություն կա: Այդ ներկայացուցչության հիմնական նպատակները պետք է լինեն. Հյուսիսային Կովկասի տարբեր համայնքների հետ կապերի հաստատումը, դրա հիման վրա երջանի հայ համայնքների համար գոյության նպաստավոր ատելակարգի ձեւավորումը, մերձավոր արտասահմանի սփյուռքի եւ Հայաստանի հարաբերությունների նոր մակարդակի բարձրացումը: Ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական իրադրության մեջ սփյուռքն իր կողմից կարող է լրջորեն աջակցել Հայաստանին: Իրավիճակի չափազանց պայթյունավտանգ լինելը գիտակցվում է սփյուռքի բոլոր խավերի կողմից եւ դա նրան համախմբման է մղում: Դրա համար Հայաստանի կողմից ներկայացվող ամեն մի խելացի առաջարկություն այստեղ կընդունվի ըմբռնումով եւ գործուն աջակցությամբ: Խնդիրը երջանում ծանրակշիռ լոբբի ստեղծելու նպատակով ճիշտ լրատվական-քարոզչական աշխատանքն է:

- Ո՞րն է այս սեմինարի նշանակությունը եւ հեռանկարը:

- Նմանօրինակ սեմինարները մի կողմից լրատվության հզոր աղբյուր են, մյուս կողմից դրանց ժամանակ կարելի է լսել կարծիքներ, որոնք կարող են հետագայում ներգործել Կովկասում գոյություն ունեցող հակամարտությունների մեջ ներքաշված կողմերի պատշաճական քաղաքականության ձեւավորման վրա: Հետեւաբար այս սեմինարների հայկական կողմի մասնակցությունը ոչ միայն ցանկալի է, այլեւ անհրաժեշտ: Մինչեւ տարվա վերջը նախատեսվում է եւս մի սեմինար անցկացնել (օգոստոս-սեպտեմբեր ամիսներին): Հայաստանը չի կարող անտարբեր լինել Հյուսիսային Կովկասում ապրող հայերի ճակատագրի հանդեպ: Քանի դեռ պետական մակարդակով չեն ստեղծվել համապատասխան կառուցվածքներ, հատկապես կարեւոր նշանակություն են ձեռք բերում Հյուսիսային Կովկասի ֆորմալ (Ռուսաստանի Ազգպետական, Սամարոդոլի երկրամասի վարչակազմի սոցիալական խնդիրներով զբաղվող դեպարտամենտը եւ այլն) եւ ոչ ֆորմալ կազմակերպությունների ղեկավարների հետ ունեցած անձնական կապերը: Ես կարծում եմ, որ բոլոր մակարդակներում բանակցությունների գործընթացը պետք է տեւակայն լինի, այն չպետք է թերագնահատել:

ՆՏ

Ընդլիկ

ԿՎՆ-ը զուտ ռուսական երեւո՞ւյթ

Ակամա այսպես ես մտածում՝ դիտելով հայկական հեռուստատեսությամբ օրեցս եթեր հեռարձակված հաղորդումը ուրախների եւ հնարամիտների հերթական մրցույթից, որն անցկացվում էր մեր ուսանողական 3 թիմերի միջեւ: Չխորանալով դասախոսների սրամիտ կամ ոչ սրամիտ լինելու, նախկին համամիութենական մրցույթների կազմակերպման ձեւերին ու մանրամասներին կրկնակոխ հետեւելու, եթե չասենք կապկելու եւ այլ հարցերի մեջ, հայտնենք միայն մեր զարմանքն ու տարակուսանքը նման միջոցառումները միմիայն ռուսերենով անցկացնելու կապակցությամբ: Եթե Մոսկվայում դա բնական է, ապա այստեղ ոչ միայն անբնական, այլեւ ուղղակի անհեթեթ է հնչում: Այն տպավորությունն է ստեղծվում, թե ուրիշ լեզվով կամ անհնար, կամ էլ հակացուցված է սրամտելը: Թեեւ «ի պաշտպանություն» մասնակիցների պիտի ասել, որ նրանք երբեմն-երբեմն իրենց խոսքը համեմում էին հայերեն բառերով եւ ժարգոնային արտահայտություններով՝ դրանով իսկ ցուցադրելով իրենց ազգային պատկանելությունն ու ոչ գրական հայերենին գոնե մասամբ տիրապետելու պարագան:

Ամենայն հավանականությամբ այս ամենում իր որոշակի «ավանդն» ունի միայն հեռավոր կերպով Ալեքսանդր Մատյուկովին հիշեցնող մեր բժշկական ինստիտուտի հանրահայտ թիմի այն բարձրահասակ երիտասարդը, որ մշտապես մի ձեռքը գրպանում ստանձնել է հայտարարի առանցքային դերը: Լեզվական այս խնդրում ակներեւորեն առկա է հիշյալ թիմի «թերեւ ձեռքը», որը նախկին Խորհրդային Միության վերջին առաջնությունում «ինտերնացիոնալ» «Բաքվի տերերի» հետ կիսեց առաջին մրցանակը:

Լ. Լ.

Դատարան

Դավիթաշենից կայարան

Երեւանի Դավիթաշեն թաղամասը այն վայրերից է, որն իրոք կտրված է քաղաքից: Տրանսպորտային վիճակը այստեղ ծայրահեղ լարված է, միակ կարը քաղաքի հետ թիվ 25 երթուղային ավտոբուսն է, որը վերջին ամիսներին ոչ բոլոր օրերին է աշխատում:

Թիվ 56 երթուղային ավտոբուսը երբեմն է աշխատում, իսկ 45-ը՝ այնքան կարեւոր դավիթաշենցիների համար, մնաց միայն հիշողության մեջ:

Նկատել եմ, ինչպես են ձգվում ուղեւորները եւ հայացքներն ուղղում կառուցվող Դավիթաշենի կամրջի կողմը, երբ երթուղային ավտոբուսն անցնում է այդ տեղամասով: Շատերը դժգոհում են, որ եթե գիտենային, թե այս կամուրջը չէր կառուցվի եւ Դավիթաշենի մետրոյի հեռանկարային կառուցումը դուրս կգար նույնիսկ նախագծից, ապա ոչ մի դեպքում չէին գա այս ծայրամասը, որտեղից նույնիսկ անցյալ տարի տրանսպորտի նախարարության նախաձեռնությամբ պոկեցին եւ տարան տրոլեյբուսի պոնծ լարերը:

Ինչեւէ: Անցածը հետ չես բերի:

Երեւի կկիսեմ բազմահազար դավիթաշենցիների այն միտքը, որ կարելի է հավելեմ բացել Մաշտոցի երջանի խնայբանկում՝ տրոլեյբուսային գիծը Դավիթաշեն թաղամասում շուտափույթ անցկացնելու նպատակով: Հույս ունեմ, որ կգտնվեն հովանավորներ եւ բարեգործներ: Իհարկե, մեծ աջակցություն այս գործում կցուցաբերեն նաեւ դավիթաշենցիները: Իսկ եթե միանա նաեւ կառավարությունը, ապա հնարավոր է մինչեւ գալիք տարին լուծել այդ չափազանց կարեւոր հարցը:

Մյուս հարցը կապված է Երեւանի երկաթուղային կայարանի հետ: Կան մի շարք վերքեր, որոնց ժամերն անհարմար են բնակչությանը:

Օրինակ, Երեւանից Գյումրի մեկնող էլեկտրագնացքը շարժվում է 7:18 րոպեին (ուշադրություն դարձրեք՝ անց 18, ոչ թե 15 կամ 20): Այսինքն, ներշնչվում է ուղեւորին, թե ինչքան հասակ է աշխատում մեր երկաթգիծը: Իմ կարծիքով, պետք է վերանայվեն այս եւ որոշ չվերքների ժամերը, քանզի ներկայիս տրանսպորտային պայմաններում հնարավոր չէ քաղաքի որեւէ մասից հասնել գնացքին: Այդ ուղերթներից կարող են օգտվել միայն կայարանի մերձակայքում ապրող բնակիչները: Նպատակահարմար կլինի, որ Երեւան-Գյումրի էլեկտրագնացքը շարժվի ոչ թե 7:18-ին, այլ գոնե 8:18-ին (անց 18-ի նկատմամբ ոչինչ չունեմ), դրանով իսկ լուծելով հազարավոր ուղեւորների հոգսերը:

Քաղաքակիրթ երկրներում ամեն ինչ հարմարեցնում են մարդկանց եւ ոչ թե հակառակը: Այնպես որ մեզանից կախված հարցերը պետք է անհապաղ լուծվեն:

ԱՇՈՏ ՄՂԵՐՅԱՆ

Պատերազմ

Ահաբեկչություն պատգամավորի նկատմամբ

Հուլիսի լույս 2-ի գիշերն անհայտ անձինք Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության, Ազգային ժողովրդավարական միության խորհրդի անդամ Արշակ Սադոյանի նկատմամբ ահաբեկչական ակտ են իրականացրել: Դրսի կողմից բենզին լցնելով նրա ավտոտնակը, հանցագործները հրկիզել են այն՝ ակնհայտորեն հույս ունենալով, թե ավտոմեքենայի պայթյունից կբռնկվեն նաեւ ավտոտնակին անմիջապես հարող սենյակները: Ու թեեւ ավտոմեքենայի պայթյունը կանխել հաջողվել է, այնուամենայնիվ բուսավոր ծխից երեխաները տուժել են: Գրեթե ամբողջովին այրվել է ավտոմեքենան: Ինչպես երեկ տեղեկացանք պրն. Սադոյանից, փաստորեն միայն պատահականության շնորհիվ է հաջողվել խուսափել ավելի ծանր հետեւանքներից: «Ուղղակի պատահաբար այդ պահին եւ հոսանք ունեինք, եւ կուտակած ջուր, այլապես ավտոմեքենայի պայթյունն անխուսափելի կլիներ, ապա նա: Դեղի վայր հասած միլիցիոներներին հաջողվեց հայտնաբերել այն շիշը, որով բենզին էին լցրել, բայց ես չեմ կարծում, թե մեղավորները կպատժվեն, որովհետեւ սա առաջին փորձը չէ»:

Ավելի վաղ՝ փետրվար ամսին անհայտ անձինք քարերով ջարդել էին Արշակ Սադոյանի տան աղաղակները, եւ թեեւ անցել է ավելի քան 4 ամիս, ներքին գործերի մարմիններին այդպես էլ չի հաջողվել բացահայտել գործը: Պատգամավորն այն կարծիքին է, որ կատարվածը ոչ մի կերպ չի կարելի բացատրել անձնական կամ կենցաղային պատճառներով, ուստի մնում է ենթադրել, թե այս ամենի ետեւում քաղաքական շարժառիթներ են թաքնված: Բոլոր դեպքերում, ըստ որում. Սադոյանի, բավարար հիմքեր կան ենթադրելու, թե կատարվածը քաղաքական ահաբեկչություն է:

Այս առթիվ Ազգային ժողովրդավարական միության խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ ասվում է, թե ԱԺՄ-ն չի դիտում այս դեպքը որպես պատահական գործողություն եւ հայտարարում է, որ ահաբեկչական ճանապարհով քաղաքական արդյունքի հասնելու փորձերը չեն կարող ազդել ԱԺՄ-ի դիրքորոշման եւ գործելակերպի վրա: Հանցագործության ընթացքում բենզինի օգտագործումն ակամա ենթադրել է տալիս, թե դրանում խառն են կամ մաֆիոզ կառույցներ, կամ իշխանություններ: Իսկ եթե ավելի լուրջ խոսենք, ապա երեւի պատգամավորի անձեռնմխելիությունը ենթադրում է նաեւ նրա շարժական եւ անշարժ գույքի անձեռնմխելիություն, ուստի պետք է սպասել, որ իրավապահ մարմիններն ամեն ինչ կանեն կատարվածը շուտափույթ բացահայտելու եւ մեղավորներին պատժելու:

Ա. Բ.



ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ ՍԱԴՈՅԱՆ

Դատարան

Նշանավորների ակումբ Երեւանում

Աշխարհում կան տարբեր բնույթի եւ նպատակաուղղվածության ակումբներ: Ռոտարի ինտերնեյշընալը՝ 25 հազար ակումբներ մի շարք երկրներում, յուրօրինակ է իր տեսակի մեջ: Ռոտարիի անդամ կարող է դառնալ միայն որոշակի բնագավառում հաջողության հասած ու մասնագիտական համբավ ունեցող անհատը:

Երկու տարի առաջ Երեւանում նույնպես հիմնվել է ռոտարիստների ակումբ:

Ահարոն Ադիբեկյան. «Ռոտարի առաջին ակումբը ստեղծվեց Չիկագոյում, 1905 թ., նպատակն էր միավորել տարբեր մասնագիտության մարդկանց թե ժամանցի, թե մասնագիտական որակավորման, թե փոխօգնության համար: Մինչ այսօր այդ սկզբունքներն անփոփոխ են մնում:

Ինչ վերաբերում է մեր ակումբին, ապա նրա միջազգային ճանաչումը հավանաբար տեղի կունենա այս տարվա վերջին: Գործը ինչ-որ չափով բարդացավ, քանի որ բրիտանս որոշ ուժեր, դարաբաղյան հիմնահարցի հետ կապված, խոչընդոտում էին հարցը: Բայց հայերը, որոնք ի դեպ, զգալի թիվ են կազմում ռոտարցիների շրջանում, ստեղծեցին հայ ռոտարցիների ընկերությունը (ARA), եւ նրանց ջանքերով խնդիրը լուծվեց: Ընկերության անդամները մտադիր են այս տարվա վերջին այցելել Երեւան, ներկա լինելու ակումբի հանդիսավոր բացմանը: Կժամանեն եւ Ֆրանսիայի Օրյուսոն քաղաքի ակումբի ներկայացուցիչները, քանի որ այդ ակումբը մեր կնքահայրն է: Արդեն այսօր մենք կապեր ունենք Անգլիայի, Հոլանդիայի, Բելգիայի, Ֆրանսիայի եւ այլ երկրների ակումբների հետ, որոնք ներկայացել են եւ հավաստիացրել, որ պատրաստ են համագործակցել մեզ հետ:

Յուրաքանչյուր ակումբ ունի գործունեության երեք հիմնական բնագավառ: Առաջինը՝ աջակցել մասնագիտական աճին, մասնագիտական բարձր որակների ձեւավորմանը եւ լուծել միջանձնային շփման խնդիրը, երկրորդ՝ միջազգային կապեր եւ երրորդ՝ բարեգործական գործունեություն: Չնայած մենք դեռ նոր ենք ոտքի կանգնում, համենայն դեպս փորձում ենք ինչ-որ գործ անել: Մասնավոր բուհում վճարում ենք երկու խոսքումնալից ուսանողների ուսման վարձը, կազմակերպել ենք մեր անդամներից մեկի, որ հոգեբույժ է, որակավորումը Բելգիայում, օգնում ենք զոհված մարտիկների ընտանիքներին եւ այլն: Նպատակ ունենք գնելու փոքր էլեկտրակայաններ եւ տրակտորներ ֆերմերային տնտեսություններին համար:

Մեր ակումբի անդամներ են բժիշկներ, հոգեբաններ, իրավաբաններ, փիլիսոփաներ, ձեռներեցներ, նկարիչներ: Ընդհանրապես յուրաքանչյուր Ռոտարի ակումբ ունի 25-50 անդամ, ոչ ավելի: Մենք առայժմ 26-ն ենք: Պատշաճական գրանցումից հետո մենք կարող ենք իմքներս հայկական այլ ակումբների կնքահայր լինել:

Ակումբի միջոցները ձեւավորվում են անդամավճարներից, նվիրատվություններից, տարբեր միջոցառումների՝ ցուցահանդեսներ, համերգներ եւ այլնի հետեւանքով ստացված գումարներից: Կարծում եմ, որ Երեւանի Ռոտարի ակումբը աղագայում իր ավանդը կունենա մեզանում քաղաքակիրթ հասարակություն ձեւավորելու գործում»:

Ոմանք ասում են, թե ռոտարիները հիշեցնում են մասոնների կամ գաղտնի այլ կազմակերպությունների: «Մենք ոչ այդ ենք, ոչ այն», կտրուկ ժխտում է պրն. Ադիբեկյանը:

Պատրաստեց
ԱՐԱՄ ՅԱՎՐՈՒՅԱՆԸ

Սոցիալական

Մանկավարժական աշխատողները միանում են համալսարանականներին

Երեկ, հուլիսի 2-ին, տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան Հայկական Մանկավարժական ինստիտուտի աշխատողների ժողովը, ուր քննության առարկա էին բարձրագույն կրթության համակարգի գործադուլային շարժումը եւ ինստիտուտի խնդիրները: Ելույթ ունեցողները գի գործադուլային շարժումը եւ ինստիտուտի խնդիրները: Ելույթ ունեցողները տագնապով նշեցին, որ ստեղծվել է մի իրավիճակ, երբ պետության կողմից հովանավորության բացակայության պայմաններում Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը ինքնաբերաբար գնում է դեպի փլուզում: Ժողովն ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես իշխանություններից պահանջվում է Մանկավարժական ինստիտուտին տալ Ազգային մանկավարժական համալսարանի կարգավիճակ, ավելացնել ընդունելության պլանները՝ համապատասխանեցնելով այն հանրապետությունում մանկավարժական կադրերի առկա պահանջարկին, վերականգնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի վարձատրման կառավարության կողմից վերջերս խախտած համամասնությունը եւ այլն:

Ժողովը միաձայն որոշեց միանալ Երեւանի պետական համալսարանի կողմից բարձրացրած գործադուլային շարժմանը, եւ եթե կառավարությանը այդ շարժման պահանջները չբավարարի, ապա հունիսի 6-ից միանալ համալսարանի հայտարարած գործադուլին:

digitised by A.R.A.R.@

Մեկնություն

Թուրքիան եւ Ռուսաստանն աջակցում են մրցակիցներին Ադրբեջանում իշխանության համար պայքարում

Պրոստամ ուժերի կողմից վտարված եւ խորհրդարանի կողմից իշխանազրկված, Ադրբեջանի ժողովրդավարական ձեւով ընտրված առաջին նախագահը փախուստի մեջ գտնվելով, կնցվածք է ընդունում. «Չեմ կարծում, որ Ադրբեջանը վերադառնա բռնատիրության, իսկ եթե այդ բանը պատահի, երկիրը շատ կարճ ժամանակ միայն կարող է գոյատեւել», ասում է Արուլֆազ Էլչիբեյը, մորմավոր նախագահն ու գիտնականը, ադրբեջանական Նախիջեւանի շրջանի բարձրադիր լեռների վրա գտնվող իր ծննդավայր Օրդուբադում: «Մենք արդեն իսկ որոշ քայլեր ենք արել շուկայական տնտեսության ուղղությամբ եւ այդ փաստը չդիտվի է թույլ տա, որ Ադրբեջանը վերադառնա բռնատիրական վարչակարգի»:

Պրն. Էլչիբեյը, որն անցյալ հունիսին քվեարկողների 60 տոկոսի ձայնով ընտրվել էր նախագահ, հունիսի 18-ին փախավ Բաքվից, մինչ ադրսատամբ ուժերն առաջանում էին Գանձակում իրենց հենակետերից, հասնելով Բաքվի մատույցները: Հունիսի 24-ին ադրսատամբ ուժերով շրջապատված խորհրդարանը որոշեց զրկել Էլչիբեյին իր լիազորություններից, քանի որ նա մեկնում էր մայրաքաղաք վերադառնալ:

Պատվերով, Էլչիբեյը հավաքել է ժողովական իր մերձիմ հետեւորդներին եւ Օրդուբադում աղում է բունկերային դայմաններում: Ժողովական վստահելի զինյալները դահլիճում են նրա գրասենյակը, մինչ ռազմական ոստիկանությունը հսկում է ամբողջ շրջանը:

Սակայն Էլչիբեյի ամենաուժեղ դաշտությունը գալիս է դրսից՝ Մ. Նախիջեւանից, Եվրոդրական համայնքից եւ հատկապես հարեւան Թուրքիայից, որոնք բոլորն էլ շարունակում են դաշտանել նրա նախագահության օրինականությունը: Հունիսի 24-ին Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը նամակ հղեց ՄԱԿ-ին, հայտարարելով Ադրբեջանի «օրինական իշխանություններին» նեցուկ կանգնելու իր երկրի դատարանական մասին եւ վերջին դեպքերը բնութագրելով որպես զինված ադրսատամբություն, որի նոյատակն է իշխանազրկել ժողովրդականորեն ընտրված կառավարությանը: Իր ադրսատարանում Էլչիբեյը գիտեներ իրեն այցելող թուրքական բարձրաստիճան դաշտանատարների գաղտնի խորհուրդների հետ է:

Մոսկվայում դիվանագիտական աղբյուրներն արեւմտյան այս սխալ կեցվածքը հակադրում են ռուսական կառավարության դասսիվ կեցվածքին: Վերհիշելով Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւի Արեւմուտքին ուղված կրկնակի կոչերը Ռուսաստանում հեղաշրջման ադառնալիքների դիմաց օգնել ժողովրդականորեն ընտրված նախագահ Բորիս Ելցինին, Միջին Արեւելքից եկած մի դիվանագետ, որ հետեւում է Ադրբեջանում տիրող իրավիճակին, ասաց. «Տարօրինակ է, մենք այս դեպքում նույնը չենք լսում ռուսներից»:

Ռուսաստանի արտգործնախարարության հունիսի 24-ին հրադարակված հայտարարությունը դարգաղես կոչ է անում կոնֆլիկտը լուծել «սահմանադրական հիմքի» վրա եւ նախազգուշացնում «օտար միջամտություններից»: «Սակայն, հակառաջ վերոհիշյալ դիվանագետը, երբ գործ ունես խորհրդարանական հրադարակված զինված ուժի հետ, չես կարող ենթադրել, թե Մեջլիսում դատահածն օրանդակում է սահմանադրական մեթոդների կիրառմանը»:

Ընդհանրապես այն կարծիքը կա, որ ռուսներն ուզում են Էլչիբեյի իշխանության գլուխ գալու Լիսենհանգամանքը, որ ադրսատամբ ուժերը լավ զինված են եղել Ադրբեջանից դուրս եկող ռուսական զորքի նրանց հանձնած զենքերով, բեւեռ ադրսատարանց չկա այս մասին:

Դիվանագիտական նույն աղբյուրը, կրկնելով Էլչիբեյի կողմնակիցներին Ադրբեջանում, եզրակացնում է, որ Ռուսաստանը մեծ շահ ուներ Կասպից ծովի նավթի շուրջ օտարերկրյա նավթային ընկերությունների հետ դայմանագրերը խափանելու գործում: Քաղաքական խառնաշփոթի հետեւանքով հետաձգվեց միջազգային 4 կոնսորցիումների հետ 9 միլիարդ դոլլարի դայմանագրի կնքումը:

Սակայն հավանական չէ, որ Ալիեւը համադատասխանի Մոսկվայի գրագին: Արդարեւ, նա գայրույթով է խոսում ռուսական «իմպերիալիզմի» մասին եւ ի ցույց է դնում իրեն որպես ադրբեջանցի ազգայնականի:

Մինչ այդ, Էլչիբեյի ընտրանքները դժգույն են երեւում: Եթե նա Բաքու վերադառնա, խորհրդարանը խոստացել է նրան իմունիտետ ենթարկել Գանձակում ադրսատամբ զորամասի վրա հարձակվելու հրամանի համար: Իսկ եթե շարունակի մնալ Նախիջեւանում, կարող է լուսանցքային դիրքում հայտնվել Բաքվում ծավալվող փոփոխությունների նկատմամբ:

Սակայն Էլչիբեյը մնում է հեռնահատատակամ, որ վերադառնալու է իշխանության: «Վստահ եմ, ասում է նա, որ դիվանագիտական ճանապարհով խնդիրը կլուծենք»: «Որոշ քայլեր կան իմ Բաքու վերադարձից առաջ: Մինչ այդ, առայժմ, կմնամ Նախիջեւանում: Սակայն վստահ եղիր, վերադառնալու եմ», եզրափակում է նա:

«Քրիստոնեա Սայենս Մոնիտոր»,
30 հունիս, 1993
ԴԱՆԻԵԼ ՇԵՆԱՅԴԵՐ
եւ ԿՈԼԻՆ ԲԱՐԲԱԿՈՒՂ
Մոսկվա-Նախիջեւան

Մարտահրավեր

Էներգետիկ խնդիրների լուծման որոնումներ

Տեղեկանք: Աշխարհի բազմաթիվ երկրներում կառուցվում եւ օգտագործվում են միկրոհիդեկեր: Դրանք կիրառվում են որպես էլեկտրաէներգիայի օժանդակ աղբյուր: Նման հիդրոէլեկտրակայաններ հիմնականում շահագործվում են փոքր բնակավայրերում, որտեղ անցկացված չեն էլեկտրահաղորդման գծեր: Չնայած «մեծ» հիդրոէներգետիկայի զարգացմանը, աշխարհում միկրոհիդեկերի նկատմամբ հետաքրքրությունը չի նվազում: Օրինակ, Չինաստանում, չնայած էներգետիկայի կայուն զարգացմանը, այդ կայանքների թիվն անցնում է 60 հազարից: Ընդունված դասակարգման համաձայն, միկրոհիդեկ են համարվում այն հիդեկերը, որոնց հզորությունը 100 կիլովատից ոչ է: Օրինակ, շատ տարածված 10 կվտ հզորության միկրոհիդեկի չափսերն այսպիսին են. ագրեգատի երկարությունը մինչեւ 150 սմ, բարձրությունը մոտ 40 սմ, կանգվածը մոտ 100-150 կգ: 1 կվտ հզորության մոտավոր արժեքը կազմում է 100-150 հազար ռուբլի:

Ինչպես հաղորդվել է ավելի վաղ, հունիսի 25-ին Չորաղբյուր ավանում բացվեց Հայաստանի առաջին միկրոհիդեկը: Մեր թղթակիցը դիմեց ՀՀ էներգետիկայի եւ վառելիքի նախարարության գիտության եւ կանխատեսման վարչության գլխավոր մասնագետ Ա. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ, խնդրելով պարզաբանել թե միկրոհիդեկերը Հայաստանում ինչ հնարավորություններ եւ նշանակություն ունեն: Քոչարյանի խոսքերով, միկրոհիդեկերի [illegible] համար հարկավոր [illegible] հիմնական պայման, դրահանքվող չափով ջրի հոսանքի առկայություն եւ միկրոհիդեկի ձեռքբերման ֆինանսական միջոցներ: Միկրոհիդեկի ձեռքբերումը լուծում է բնակելի տների փաստորեն բոլոր էներգետիկ խնդիրները: Եթե սենյականոց բնակարանի տաքացման նպատակով էլեկտրաջեռուցիչների շուրջօրյա աշխատանքի դեպքում բավական է 2.5-3 կվտ, սննդի դատարանման եւ տնտեսական մյուս կարիքների համար 1-1.5 կվտ, լուսավորման համար մինչեւ 0.5 կվտ: Պետք է նաեւի առնել, որ երբ էլեկտրասալիկները չեն գործում, սենյակների ջեռուցման վրա ծախսվում է լրացուցիչ 1-1.5 կվտ էլեկտրաէներգիա: Այսպիսով, Քոչարյանի խոսքերով, 5 կվտ հզորության միկրոհիդեկը կարող է լուծել կենցաղային բազմաթիվ խնդիրներ:

«Հիդրոտեխնիկ» ձեռնարկությունը Ա. Գրիգորյանի գլխավորությամբ զբաղվում է միկրոհիդեկերի ստեղծման աշխատանքներով: Ներկայումս նախարարությունում ուսումնասիրվում է Հայաստանում նման հիդեկերի արտադրություն կազմակերպելու հնարավորությունը: Դրա համար տեխնիկական ներուժ կա: Սակայն ամեն ինչ կախված կլինի միկրոհիդեկերի նկատմամբ մեր հանրապետության դատահանջներից.

Քոչարյանը նաեւ հայտնեց, որ է ներգետիկայի եւ վառելիքի նախարարությունում մշակված է Հայաստանի փոքր էներգետիկայի զարգացման ծրագիր:

ՆՏ մեկնաբանություն: Իհարկե, միկրոհիդեկերի առկայությունը միայն մասամբ կլուծի էներգետիկ խնդիրները: Բնակարանների ջերմաէլեկտրացումը, վառելափայտի եւ կերոսինի ծեռքբերումը այժմ նաեւ միկրոհիդեկերի նկատմամբ ծագած հետաքրքրությունը վկայում են էներգետիկ խնդրի լուծման բնակչության հարկադիր ինքնուրույն քայլերի մասին:

ՆՏ

Երեւանի բժշկական ինստիտուտի դասախոսներ Ս. Գրիգորյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Գրիգորյանը, Ս. Գրիգորյանը, Ս

ԹԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ... ՈՂԻ ԷՔ, ՍԱՍՆԱ ՇՈՒՐ

ռնելու, մեկնաբանելու ղեկավարության առաջնորդ:

Մարդկային սովորական փորձություն է, ամենուրեք Գողգոթա: Խաչվելու գնացող Հիսուսը շատ ավելի բախտավոր էր. նախ՝ նա մի անգամ էր խաչվելու եւ ապա գիտեր, որ հարություն է առնելու մեռյալներից, իսկ սա այս պարտադրված խաչելությունը կրկնվում է ամեն օր, ամեն ժամ եւ ամեն ակնթարթ:

Ասեմ-չասեմ, մեկ է, հազար անգամ, հազար ձեւով չարչրկված ճշմարտություն է, մեր աշխատավարձը չի հերիքում բնկուզ 250 գրամ ցամաք հաց առնելուն: Էլ ի՞նչ սրտով, ասացեք, աշխատենք: այս կամ այն հիմնարկ-ձեռնարկություններում, առավոտից իրիկուն քաղցած փորով աշխատելս ո՞րն է, որպես օրական քան-երեսուն կիլոմետր ճանապարհ կտրելով աշխատանքի հասնելս ո՞րն է: Գալիս է մի պահ, երբ մենք աշխատողներս, ինչ-որ տեղ երանի ենք տալիս թոշակառուներին, նրանք գոնե իրենց տանը նստած ամսական ստանում են իրենց 3 հազար ռուբլին, իսկ մենք ընդամենը դրանից մի քիչ ավելին ստանալու համար օրական 20-30 կիլոմետրանոց Գողգոթա ոիտի հաղթահարենք եւ դեռ աշխատենք օրնիբուն: Եւ ցավով, կսկիծով, ողբերգությամբ արձանագրում եմ, որ թոշակառու ենք ամենքս էլ, որ մուրացկանների սպասարկող բանակին կուլ ենք գնալու ամենքս էլ:

Այս անոթեսություն երկրում մի կերպ քարշ ենք գալիս, առանց ապահովության տարրական երաշխիքի, անընդհատ ու անոթաշիժ բազմացող գողերի, թմրանյութերի, զրպանահատների, հազար ու մի չարչիների շրջապատում: Ո՞ւմ դիմենք, ո՞ւմ ապավինենք, երբ դիմումները մնում են անարձագանք եւ երկիրը մրսում է գթասիրտների պակասից: Չլքեիս առաջ ուրվագծվում է Բակունցի հանրահայտ հերոսը Աբին պարը: Նա գոնե հավատում էր բուսաց թագավորի արդարադատությանը, մեր օրերում մենք սեփական թագավորի հանդեպ թեկուզ այդ անորոշ հավատից զրկվել ենք մեկընդմիշտ: Չենք զրկվել, չէ, զրկել են՝ բոլոր ասպարեզներում սոսկալի բարձիթողությամբ ստանալիք երկիրը: Երբեմն այդպես են մեզանում պետության թաքակայությունից եւ մաֆիաների գործունեությունից, նրանց կամքով ու ցանկությամբ գների այս խելահեղ բարձրացումից, բարոյազրկումից, ազգային դիմագիծը կորցնելուց: Դիմացողն, իհարկե, մի կերպ դիմադրում է սեփական ուժին ու շնորհին ապավինելով, չդիմացողը թողնում փախչում է Հայաստանից:

Այս ընդհանուր համայնապատկերի վրա, մեր մասին, առնվազն տարակուսելի է հնչում մշակույթի նախարար Հակոբ Սովսեսի վերջին հեռուստաելույթը, ուր նա ի մասնավորի, իբր պատկերավոր ու գունեղ պատասխան մեր բազում դժգոհությունների, ինքնագոհ շեշտեց, թե մշակողականները նման են այն երեխային, որը, երբ մայրը նստում է կրծքից, սկսում է աղիողորմ լաց լինել: Հեռու լինելով նրան իր ոչ հեռու անցյալը հիշեցնելու մտից միայն ասեմ, որ եթե երեխային կտրում են կրծքից, դա նրա կյանքում առաջընթաց է, եւ ծնողները հետաքրքրվում են չեն դադարում նրան սիրելուց եւ խնամելուց, իսկ մեր վիճակը, չէ, ի՞նչ առաջընթաց, պարզապես եղած-չեղածի բարձունքից ուղղակի գահավիժել է մշակույթի ծնողական ոտքի կարգավիճակով: Եւ թող չասեր Սովսեսը, նույնիսկ նախարարական իր բարձունքից ոչնչացնելով գործը, փորձի հրաժարակել բանաստեղծությունների իր ժողովածուն եւ մաշկի վրա կզգա, թե ինչպիսի անհաղթահարելի դժվարություններ կան այդ ճանապարհին եւ դրամական, եւ սեփական արժանապատվությունը կորցնելու իմաստով: Ասենք, չի հրաժարակի, որովհետեւ, երեւի ինձանից լավ գիտի, թե գրադարակներում ինչպես են մտել փոշոտվելու իր գրքերը: ընթերցողի բացակայությունից: այժմ մարդիկ զբաղված են հանապազօրյա հաց ճարելու հոգսերով միայն եւ բանաստեղծություն, նույնիսկ ամենից հանճարեղը, կարդալու ժամանակ չունեն: Սակայն ասած, ես բարձր եմ գնահատում Հակոբ Սովսեսի ստեղծագործությունը, հավատում եմ բանաստեղծական նրա ճաշակին, նրբազգացողությանը, աներկբա շնորհին, բայց նախարար Հակոբ Սովսեսի հեռուստաելույթն իրենց իսկ անճարակությունը կոծկելու ծիծաղելի փորձ էր:

Ինչպե՞ս եղավ, որ մենք բարձանք հուշարձանի պատվանդանից սալիկ հանող, ծառ կտրող, գիրք վառող, արժանապատվությունը կորցրած փողոցում սրանից-նրանից մուրացող ժողովուրդ, ինչպե՞ս պատահեց, որ միանգամից արքնացան կենդանական բնազդն այդքան մեծ ու տարածուն շառավիղ նետեց մեր հոգիների դատավայրում: Այն ինչ բոլշեւիկյան վարչակարգը միահեծանությամբ, բռնություններով, կեղծած փաստերով ու հոսանքներով, միջազգային մակարդակին համապատասխանեցնելու մեր այժմյան խղճուկ աշխատավարձը: Ամեն առավոտ գործի գնալիս սիրտս մղկտում է ցավից, երբ մտածում եմ, թե մեկ ամսվա ստանալիս երկու օր հազիվ բավականացնի ինձ ու ընտանիքիս, եթե, իհարկե, չխմեմ, չխմեմ, չհագնեմ, ոտով երթեւեկեմ ու նույնիսկ... չընչեմ: Այո՛, մենք վարժվել ենք ամեն ինչի ծոմի հետ նաեւ... ընչելի օդի ծոմը պահելուն: Չենք վարժվել, վարժեցրել են... Հետաքրքիր է, մարդն ամեն բանի հարմարվում է, եթե հարմարեցնելու, վարժեցնելու դաժան փորձերը կրկնվում են յուրաքանչյուր Աստծո օր: Մխիթար Ամեցի պատմիչը վկայում է, որ Ամիի բնակիչները 150 տարի շարունակ վարժվել էին այն բանին, որ հաղթի գլխավոր կառույցի՝ Մայր Տաճարի գմբեթին քրիստոնեական խաչի փոխարեն բուրմանելջուկ նվաճողը տեղադրել էր նժույգի պայտը: Պատկերացնո՞ւմ եք, վերասլաց խաչի փոխարեն բշնամական նորադների գինանշանը: գեներալ, սրոտացնող հայ մարդու հաղթակերությունը մոռացնել տվող: Ամեցիները հարմարվել-անցնում էին Մայր Տաճարի կողքով, գուցե եւ մտնում էին գավիթ ապրելու, գերության ծանր բեռան տակ երկչոտված, հուսահատված չէին նկատում իրենց ծնողների, ոտքերի, հոգիների զրնգացնող շղթաները:

Ժողովրդի անունից խոսող մեր բարձրաստիճան ղեկավարներից շատերը դասակարգ խոսքերի սառը ցնցուղի տակ են պահում առանց այդ էլ սովալուկ ու տանջահար մարդկանց: Այս իմաստով առնվազն տարակուսելի է ՀՀՇ հերթական համագումարում Հայաստանի Հանրապետության նախագահի վերջին ելույթը: Ի՞նչ էիք սպասում նրանից եւ ի՞նչ ստացաք ի պատասխան: Ամբողջ ելույթը կես առ կես բաղկացած է ընդդիմության՝ իր եւ ՀՀՇ հասցեին ներկայացրած մեղադրանքների հերքմանն ու ճնշադատմանը: Ուրիշ ոչինչ, ընդամենն այդ ու այդքանը: Այնինչ օր-օրի հոգեկան, բարոյական ու սոցիալական ծանրագույն կացության մեջ հայտնվող մարդիկ եւ դրանց մեջ հայրուր հազարավոր իմն նմանները ովքեր գիտակցաբար հեռու են կանգնել կուսակցություններից ու նրանց որդեգրած գաղափարներից, հույսի շող էին ակնկալում իրենց նախագահից, վիճակի բարելավման թեկուզ հեռահար ու անիրագործելի մի խոսում, որ, ավաղ, այդպես էլ չսացան: Պարզ զգացվում էր, որ նախագահին անհանգստացնողն ընդդիմությունն ու նրա քաղաքական տարակարծությունն են, քան թե քաղցած ժողովրդին ծայրագույն լարումից դուրս բերելու հնարավոր ելքեր գտնելու ցանկությունը: Իսկապես որ, սովորական պայմաններում՝ չկարողացավ գլուխ բերել 70 տարի շարունակ, սրանք այս նորերը արեցին միանգամից, ընդամենը երկու-երեք տարուա: Շատ լավ հիշում եմ, թե 50-60-ական թվականներին ինչպես էին գիշեր-զարթ մեր գլուխները տանում կոմունիզմի կառուցման գաղափարներով: Մենք, իհարկե, չէինք հավատում, իհարկե, գիտեինք, որ այդ ամենը հանցավոր սուտ է, բայց այնքան շատ էին սերը, այնքան էր խեղաթյուրված մեր անցյալ ու ներկա պատմությունը, որ այդ վերջինը գառան պես անմեղ էր թվում մեզ: Միաժամանակ մտքերս չէր էլ անցնում, թե այդ թեկուզ հորինովի Արարատյան փոխարեն, ընկնելու ենք վաղնջական ու քարանձավային նախնադարը: Քարանձավային կյանքն իր կանոններն ունի մարդկային հոգեբանությունն ու հաղթականությունը լիով օգտագործելու, վայրի բնազդական ախորժակ, իբրեւ միակ ու պարտադիր զսպաբաժիկ, մեզ հագցնելու իմաստով հագել ենք, Տեր Աստված հագել ենք անասելի քանկության, քաղցի, խեղճության, խաբեբայության հագուստ ու մի մեղմ զսպաբաժիկը եւ իբրեւ անոթեցած անօգտագործելի բաներ, դեն նետել գթասրտությունը, սերը, հավատը, մտքերը, գիտության լույսը, հաղթակարությունը, տնտեսությունը, մի խոսքով այն ամենը, ինչը հարյուրամյակներ ու հազարամյակների ընթացքում անասելի դժվարությամբ ու զոհողությամբ ձեռք է բերել մեր ժողովուրդը: հասկանանք, որ սա ոչ թե բնական ու սովորական տաճանում է, այլ գառավեժ անկում: Եւ հրեշագի կործանումը վերջնական ու անվերադարձ չինի, ի՞նչն է ոչնչացնում... հա... նախնադարյան քարե կացինը...

Ամենուր շուկաներ են տարածվում, թե հացի, նավթամթերքի ու չգիտեմ էլ ինչերի գները դարձնելու են միջազգային գներին համապատասխան: Ոմանք դարձնեն: գլուխը քարը, սակայն դանից առաջ թող նաեւ բարի գտնվեն գտավ իրեն հասցեագրված մեղադրանքներից հետ ու հանգիստ ազատվելու ելքը: միանգամ հանրապետությունը ներսուդրսից մրսում է պարտադրված եւ արդեն տեւական թվացող ճգնաժամից հենց որոնող գտնողի պակասից: եթե չասենք իսպառ բացակայությունից:

Հետաքրքիրն այն է, որ ով գալիս է իշխանության գլուխ, գրեթե ոչինչ չի խոստանում ժողովրդին: մնայուն նախագահը ոչինչ չի խոստանում, փոփոխվող վարչապետներն ու նախարարները ոչինչ չեն խոստանում դրանով, կարծես, ցանկանալով ասել, թե ամեն ինչ թողնում են բարձիթողի, թե ով ինչպես կարող է թող գլուխը պահի: Եթե այս դարձդարձիկ երկրում յուրաքանչյուրս պետք է մտածենք մեր գլուխները պահելու մասին, այդ դեպքում մեր ինչի՞ն են պետք անթիվ-անհամար նախարարությունները, անթիվ-անհամար պարտնյորների պետական նախարարներով ու խորհրդականներով անընդհատ ուռճացող բյուրոկրատական աղարասը: Եթե, բան է, հրաժարական կատարեր եւ երկիրը մի գորավոր կառավարությամբ իսկապես իրավական դառնար, ապա առաջին հերթին եւ ամենից առաջ գրելու էր անխոսում նախագահից մինչեւ անխոսում նախարարների ու զանազան նախարարիկների բանակը: Գուցե նրանց փոխարինեն նորերը, ովքեր պարելու ու պարեցնելու ինչ-որ ելք կգտնեն այս մահաբեր երկրում, ինչ-որ բան կխոսանան ու կկատարեն: էհ, գողը տանի, գոնե շարժում կստեղծվի այդ դեպքում, թե չէ խեղդվում ենք անշարժ, ներքեւում, թե չէ խեղդվում ենք անշարժ, ներքեւում խանձությունից ու գարշահոտությունից, անբուժելի հիվանդության համաճարակ տարածող ճահճի ներկայությունից: Սովոր ենք, է՛, բրժնեյան իշխանության ժամանակահատվածը համարել լճացման տարիների: Տո, իսկական լճացման տարիները հենց սրանք են որ կան, սրանք են՝ այս աննախանձելի ներկան ու անհեռանկար, անորոշ ապագան, երբ տնտեսությունը կիսակենդան է, մշակույթը կիսամենդան, ներսուդրսի հաղթականությունը հիմնականում ձախողված եւ ուրեմն դարձյալ կիսակենդան, ժողովուրդը դիմակազրկված ամբոխ, ազգային նկարագիրն ասիճանաբար կորցնող: Եւ օգնում ենք մեզ ազատ ու անկախ հորջորջելով, դեսդանաներ բացելով, արտասահմաններում դեսդաններ կարգելով, եւ այդ ամենը սոսկ ձեւական, ուռուցիկ, փքված ու սնամեջ, իբր թե երկիր ենք ու պետություն: Եւ ճանապարհին զոհում ենք ամենաթանկը, ինչը միակ ազնիվն է ում միամիտը, այսինքն, հայրենի հողը՝ սահմանամերձ գոտու մարդկանցից դատարկվող գյուղ ու հաղթների տեսով, անտառը կտրված ծառերի կմախքացած բներով, ազգային ոգին ու մշակույթը՝ ավելորդության զգացումից ամլացող արվեստագետների անգործ ու հաղցած բանակի առկայությամբ: Դե արի, իմ բանաստեղծ բարեկամ Հակոբ Սովսես, եւ իբրեւ մշակույթի նախարար պատասխան տուր մարդկանց պարտադրված ու արվեստագետների մի ամբողջ սերնդի կաֆկայական ակամա դատապարտվածության համար: Թե չէ, իհարկե, գրողը գրում է, բայց հնար չունի հրատարակելու, նկարիչը նկարում է, բայց չի ցուցադրվում, կինոռեժիսորը մտքում աղագա ֆիլմերի ծրագիր է կազմում, բայց չի նկարահանում... դատապարտվածություն չի, ի՞նչ է...

Եւ թող... թող մշակույթի նախարարությունը, թեկուզ խորթ մոր անտարբերությամբ ու թերեւությամբ, իր վերին ուսերին կրի ծախսերի ծանրության նույնիսկ ամենաչնչին բաժինը, երբ կարող է: Չի՞ կարող, հասկանալի է: Եւ եթե չի կարող, խորթ մոր իրավունքն ազատ չունի քննադատելու մտավորականությանը՝ տրտնջալու ու բողոքելու համար:

Եթե լսելու լինենք նորօրյա ղեկավարներին, ոիտի ըմբռնումով մոտենանք ամեն ինչին, եթե երկիրը կործանվում է, չենք տրտնջալու, ծառը կտրվում է՝ չենք հառաչելու, ժողովուրդը քաղցած է ու դիմաքրկված, չենք դժգոհելու: Այդպես էլ է: ժողովուրդը հասկանում է, որ երկիրը ծանր կացության մեջ է եւ հիմնականում լուռումունջ կրում է իր խաչը: Բայց եղե՞լ է դեպք, երբ այսօրվա իշխանավորները գեթ մեկ անգամ ըմբռնումով մոտենան ժողովրդի արդարացի դժգոհություններին ու բողոքներին: Չի եղել, չէ, եթե լինեիր, Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու արժանի նվաճում կհամարվեր: Իրականն այն է, որ կառավարությունը, զանազան մաֆիաների գործունեության վրա հենվելով, անջրպետվել-մեկուսացել է ժողովրդից, ժողովուրդն ի կառավարությունից: Ահա թե ինչ այսպես շարունակելն այլեւս անելի է:

Եւ նայելով դառնությունից, բ ծանրությունից ծռված ողնաշաղ մարդկանց բազմությանը՝ սիրտս վում է անսպասելի ցավից, իսկ տեղափոխվում-գնում է հեռուն կան ու անիրական մարդկանց խորհրդանիշերի դիցաբանական խարիզ, ուր ապրել ու գործել են հնասուն էպոսի «Սասնա ծռեր» հերոսները: Այն ե՞րբ էր, ճիշտ այսպես նման հացի թանկություն ընկավ Սասունում, ճիշտ այսօրվա նման Ծուղիկ խեղճացան: հուսահատվեցին, ծռվեցին նրանց ողնաշարները, եւ այդ, բոլորը Սասուն տանող ճանապարհ փակող ամենակուլ աղյուսի պատճառով էր, եւ երկրի թագավորը մանուկ ու միամիտ, դեռ չէր հասկանում թե աղյուսն ինչ է, բայց ահա սովը խեղճ ու տկար մարդկանց ամբարներից եկավ-հասավ նաեւ թագավորի մինչ այդ անհատակ ու լիքը թվացող ամբարին: Ճիշտ եւ ճիշտ այսօրվա նման կյանքի դատարկության, հացի թանկության ու նեղության մեջ ելք չգտնելը հանցագործություն էր, ելքը չգտնելն անհնարին էր դարգարեսը... գտան... վեց: Դա մանուկ թագավորի հասունացնել արքնացնելն էր: Սասնա Մհերը չէր, չէ, ժողովրդի արքնացումն ու միասնական ոգին էր որ կոիվ տվեց սով-հրեշի դեմ: Ահա թե ինչու ասում եմ հավատալ, որ սա հենց այն ժողովուրդն է, որ նախկինում ստեղծել է «Սասնա ծռերը», որ 1988-ին նունցվեց Ղարաբաղի, իսկ ապա՝ ի լայն առումով կյանքի արդարության ճարտարությունների դեմ: Արդ խեղճությունն ու հուսահատությունը, որ դարի դարդարած հազարամյա չի հ... դասախոսանում նրա դարավոր տուկացին, անդունդ-վանդուցին, որից հաց քամելու նրա բնավորությունը: Սթնոլորտը ստեղծել է, բարվոքությունը ծայր ասիճան սրվել է՝ ինչպես էպոսում դարձել են նախնիները, համբերության բաժակը լցված է վաղուց, ո՞ւր մի արդարության համար անհատ կռվի դուրս գա Սասնա ծռեր: Սա, իսկ լիքի քաղաքական դատարկության կոչ չէ, ապա այդ էլ իզուր տեղը շատ ենք սպասել, այլ դարգարեսը միասնության ոգու զարթոնքի ու հրամանի բռունցքվելու հորդոր է, որից կենա, կսարսափի, ուզած-չուզածությունի կնդվի թվացյալ թարմով, նախարարներով, ուրիշ հազար ու մի անգործունյա չինովնիկներով ծանրաբեռնված այս պետությունը:

ՍՐՍԵՆ ՍՍԱՐՏԻՐՈՍ

digitised by A.R.A.R.@

Էջերից

ԱՇԽԱՐՀԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Լուվրը երկու հարյուր տարի անց

Դուք գիտե՞ք, թե ինչպես է Լուվրում հայտնվել Միլոսյան Վեներան: 1820 թվականին Միլոս կղզու մի գյուղացուց Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան մարկիզ դը Հիվյերը գնեց մ.թ.ա. 2-րդ դարի վերջում անհայտ վարպետի կողմից ստեղծված այդ արձանը եւ նվիրաբերեց այն Լյուդովիկոս 18-ին: Թագավորը հրամայեց Վեներան տեղադրել Լուվրի թանգարանում, իհարկե չենթադրելով, որ այն ողջ գեղարվեստական աշխարհի համար կդառնա անսիկ քանդակագործության գրեթե ամենահայտնի գլուխգործոցը, գեղեցկության եւ կատարելության անգերազանցելի մի նմուշ եւ մագնիսի պես դեղի Փարիզ կծգի միլիոնավոր մարդկանց աշխարհի բոլոր ծայրերից:

Այս տարի լրանում է Լուվրի համաշխարհային մակարդակի այդ գանձարանի 200 տարին: Լուվրի բակում արվեստի կենտրոնական թանգարանի հիմնադրման մասին դեկրետը Կոնվենտի կողմից ընդունվեց 1793 թ. հուլիսի 27-ին, եւ շուտով թանգարանն իր դռները բացեց ժողովրդի առջեւ: Ինչ վերաբերում է թագավորական հավաքածուին թանգարանի հիմքին, առաջ այն հիմնվել էր դեռ Ֆրանսուա Ա-ի կողմից (1494-1547): Նրա հավաքած նկարներով ներկայիս Լուվրն ավելի շատ է հարստանում: Դրանց թվում են Ռաֆայելի եւ Լեոնարդո դա Վինչիի չորսական նկարներ եւ Տիցիանի վրձնած թագավորի դիմանկարը:

Ֆրանսիական միապետներից գրեթե յուրաքանչյուրն իր ոլորտն էր համարում իր անձնական լուման ներդնել այդ հավաքածուն հարստացնելու գործում: 1848 թվականին թանգարանը դարձավ պետության սեփականությունը, որը նրա ֆոնդերի լրացման համար ընձեռեց նոր հնարավորություններ: Մեծ է հայցի կոլեկցիոներների եւ շոայլ մեկենասների ցուցակը, որոնք թանգարանին նվիրել են կամ կտակել իրենց ամենահարուստ հավաքածուները:

1993 թվականը Լուվրի պատմության մեջ կմտնի ոչ միայն որպես հոբելյանական տարի, այլեւ որպես խոշոր ձեւափոխության պատկառելի ծրագրի ավարտման տարի, որի շնորհիվ Ֆրանսիայի ամենախոշոր թանգարանը կդառնա նաեւ ամենամեծը աշխարհում: Տասնյակ տարիների ընթացքում տեղի բացակայության պատճառով Լուվրը չէր կարողանում ցուցադրել իր գանձերի նույնիսկ մեկ երրորդ մասը, դրանց մեծ մասը պահվում էր պահեստներում: Թանգարանն զբաղեցնում էր Լուվրի պալատի միայն կեսը, այնտեղ տեղավորված էին նաեւ այլ հիմնարկներ եւ ծառայություններ եւ նախնաառաջ ֆինանսների նախարարությունը, որին պատկանում էր ամբողջ հյուսիսային թեւը:

Ֆրանսուա Միտերանի նախագծեցումով ամերիկացի ճարտարապետ Փեյնը մշակեց «Մեծ Լուվրի» նախագիծը: Այդ նախագծի իրագործումը սկսվեց 1983 թ. Նապոլեոնի բակում 20-մետրանոց աղյուսե բուրգի կառուցումով: Այդ զանգվածային եւ բավականին խիզախ ծրագիրը, որն առաջացրել էր կատաղի քննադատություն, այժմ մոտենում է իր ավարտին:

Նապոլեոնի բակի մեջտեղում թանգարանի նոր գլխավոր մուտքը եւ բուրգի հովանու տակ ստորգետնյա ճեմարանը բացվեցին Ֆրանսիական Մեծ հեղափոխության 200-ամյակին: Անցյալ տարվա դեկտեմբերին հաճախորդներին ընդունեցին Ֆրանսիական կերպարվեստի նոր դահլիճները, որ առաջին անգամ ներկայացվեցին պահեստներից հանված ամենահետաքրքիր ստեղծագործությունները: Ավարտվում են հիմնական աշխատանքները պալատի հյուսիսային թեւում, որի լիիրավ տերն է դառնում թանգարանը: Իսկ գեղեցիկ բուրգի եւ Հաղթական կամարի միջեւ կառուցվում են ժամանակավոր ցուցադրման եւ Փարիզի ու Լուվրի պատմությանը նվիրված դահլիճները, ինչպես նաեւ առեւտրական սրահների, ռեստորանների, փոստի, դրամատների համար տարածքներ եւ, վերջապես, կահավորվում է ավտոմոբիլների եւ ավտոբուսների համար ընդարձակ ավտոկայարան: Այն կավարտվի այս տարվա նոյեմբերին:

Ասում են, որ այժմ Ֆրանսիան կանգնած է բազմաթիվ դժվարությունների առաջ: Սակայն մշակույթի համար նա աշխատում է միջոցներ չխնայել, ինչպես վայել է մեծ տերությանը:

Հ. Լ.

Տիեզերքներ

ԱՄՆ-ը բախվում է խոչընդոտների

«Նյու Յորք թայմզ» թերթը հաղորդել է, թե այն կապակցությամբ, որ Տոկիոյի բարձր մակարդակի տնտեսական խորհրդակցությունից ընդամենը մի քանի օր առաջ առեւտրական հարցերին առնչվող բանակցությունները փակուղի մտան, իսկ Ռուսաստանին օգնելու ԱՄՆ-ի ռազմավարության նկատմամբ դիմադրությունն ուժեղանում է, Քլինթոնի վարչակազմն իր ուշադրությունը բեւեռել է քաղաքական հայտարարության վրա, որը կոչված է ցուցադրելու այդ հանդիպման հաջողությունը: «Տնտեսագիտական խնդիրների գծով առաջընթացը քաղաքականից դյուրա է, ուստի եւ մենք ջանքերը բեւեռում ենք այն հարցերի վրա, որոնք կարող ենք վերահսկել», մեջբերում է թերթը վարչակազմի բարձրաստիճան պաշտոնատար անձանցից մեկի խոսքերը: Սակայն անցյալ շաբաթ Տոկիոյում կայացած բարձրաստիճան դիվանագետների խորհրդակցությունում ԱՄՆ-ը խոչընդոտների բախվեց նաեւ այդ ճակատում, քանի որ մի շարք նախաձեռնություններ: Իրանին դաստիարակելու առաջարկությունից մինչեւ Բոսնիայի նկատմամբ միասնական քաղաքականության մշակումը, փակուղի մտան: Նախատեսվում է խորհրդակցության ամփոփիչ հաղորդագրության հայտարարության մեջ մտցնել Ուկրաինային ուղղված կոչը վավերացնել START-1 դայմանագիրը եւ միանալ միջուկային զենքը չտարածելու դայմանագրին, ինչպես նաեւ Ռուսաստանի բարեփոխումները խրախուսող արտահայտություն:

Թերթի մեկ ուրիշ հոդվածում դրա հեղինակը վկայակոչելով ԱՄՆ վարչակազմի որոշ պաշտոնական անձանց հետ ունեցած զրույցները, հաղորդում է, «Ակնկալվում է, որ Տոկիոյում Մեծ յոթնյակի հանդիպման ժամանակ հավանություն կտրվի Ռուսաստանում սեփականաշնորհման ծրագրին աջակցող հիմնադրամի ստեղծման քայլերին, համաձայնություն ձեռք կբերվի Մոսկվայում Յորքյակի երկրների մշտական ներկայացուցչության բացման շուրջը, որոնք կհամակարգեն Ռուսաստանին խոստացված 28 մլրդ դոլարի օգնության հատկացումը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Վաշինգտոն

Քլինթոնը գոհ է իրենից

ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը Սոչիակ տանը կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց, թե Միացյալ Նահանգները առաջադրություններ ունի, որ Իրանի կառավարությունը մեղսակից է Ջորջ Բուշի վրա մահափորձի կատարման ծրագրերի մշակմանը: «Մենք, ասաց նա, ապացույցներ ունենք, որոնց համաձայն Քուվեյթում Բուշի գտնվելու ժամանակ ռումբի օգտագործմամբ կատարվելիք գործողությունն արժանացել էր Իրանի կառավարության հավանությանը: Մեր վերլուծողների փորձը վկայում է, որ նման ծավալի գործողությունը կարող էր հավանություն ստացած լինել միայն ամենաբարձր այսպիսիներում»:

«Մենք գտնում էինք, այնուհետեւ հայտարարեց Քլինթոնը, որ միջազգային իրավունքի համաձայն եւ այդ գործի փաստերի վրա հիմնվելով, լավագույն թիրախը կդառնար հետախուզության կենտրոնակայանը, որտեղ ամենայն հավանականությամբ ծրագրվել էր գործողությունը: Նախ եւ առաջ մենք լուրջ վնաս հասցրինք նրանց խոշորագույն հետախուզական օբյեկտին, երկրորդ, մենք բացահայտորեն հասկացրինք, որ չենք հանդուրժի պետական ահաբեկչության եւ որեւէ անօրինական ու վտանգավոր բան: Իմ կարծիքով, տվեց շատ կարեւոր ազդանշան»:

Պատասխանելով Իրանի հետ հարաբերությունների կանոնավորման հնարավորությանն առնչվող հարցին, Քլինթոնը հայտարարեց. «Մենք պետք է յուրաքանչյուր երկրի մասին դատենք ըստ նրա վարքագծի. ես կարծում եմ, որ շատ դժվար է պատկերացնել բնականոն հարաբերությունների հնարավորությունը, ոչ միայն այս դեղի պատճառով, այլեւ ՄԱԿ-ի բանաձեւերի կատարումից Իրաքի համար հրաժարման կաղակցությամբ»:

ԱՄՆ պետքարտուղար Քրիստոֆերը Սի-էն-էն հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարեց. «Նախագահ Քլինթոնի ցուցումով Իրաքի դեմ իրականացված ռազմական ձեռնարկումը ակնհայտ նախազգուշացում է այն մասին, որ պետական ահաբեկչության առկայության դեպքերում ԱՄՆ-ը անվարան կարող է միակողմանի գործողություններ ձեռնարկել: Եթե Բաղդադը որեւէ պատասխան գործողություն ձեռնարկի իր երկրի ներսում կամ երկրի ազգային փորձասնությունների բոլորի դեմ, կամ եթե շարունակի խախտել ՄԱԿ-ի բանաձեւերը, առաջ կարծում եմ, նա կիմանա, թե մենք ինչ կարող ենք անել»:

Այն հարցին, թե «կարելի՞ է արդյոք ակնկալել երկրի ներքին փոփոխություններ, որոնք կհանգեցնեն Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալմանը», Քրիստոֆերը պատասխանեց. «Մենք գիտենք, որ Իրաքի դեմ ձեռնարկված պատժամիջոցների պատճառով իրոք տառապում է այդ երկրի ժողովուրդը եւ ժամանակի ընթացքում դա պետք է ի հայտ գա որեւէ ձեւով: Սակայն Սադդամ Հուսեյնը երկիրը պահում է այնպիսի զրեղ սեցության մեջ, որ մենք չենք կարող ասել, թե դա երբ տեղի կունենա: Մենք պաշտպանում ենք Իրաքի ընդդիմադիր խմբերին եւ մտադիր ենք շարունակել գործադրվող ճնշումը: Մենք չենք պատրաստվում վերացնել պատժամիջոցները»:

Միաժամանակ Ուկրաինայի արտգործնախարար Զլենկոն խորհրդարանի նիստում հայտարարեց, որ ամերիկյան հրթիռներով Բաղդադի հրթռակոծումը կարելի է համարել չափն անցնող գործողություն, որը դուրս է գալիս անհրաժեշտ բավարարության սահմաններից: Միջազգային պաշտպանություն վայելող անձի սպանության փորձը ագրեսիայի քայլ չէ, ուստի եւ Իրաքի նկատմամբ ԱՄՆ-ի վրեժխնդրությունը բազմաթիվ հարցեր է ծնում, ասաց նա: Մենք հաստատապես կանգնած ենք այն դիրքերում, որ նույնիսկ հանուն միջազգային հանցագործների պատժման, անթույլատրելի է վտանգի ենթարկել խաղաղ բնակիչների կյանքը: Այս նախադեպը կարող են օգտագործել որիշ պետություններ, որոնց քաղաքականության մեջ զգացվում են առանձին աշխարհաշրջաններում ռազմական առաջատար դեր խաղալու փորձերը ի հիմնավորումն այն գործողությունների արդարացման, որոնք հակասում են պետությունների գոյակցության հաստատված նորմաներին:

Բուրգայի արտգործնախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ, որով Բաղդադին ԱՄՆ-ի հասցրած հրթռային հարվածը գնահատված է որպես արդարացում չունեցող ագրեսիվ քայլ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Տնտեսություն

ԳՖՀ-ի առեւտուրը զարգացող երկրների հետ

Գերմանիայի վիճակագրական գերատեսչության փորձագետների տվյալների համաձայն, եթե չլինեին զարգացող երկրներից հումքի եւ կիսաֆաբրիկատների գնման իջեցված գները եւ այդ երկրներ արտահանվող գերմանական ապրանքների մեծական թանկացումը, ապա բուն ԳԴՀ-ում աղքատության արժեքն անհամեմատ բարձր կլիներ:

Վիճակագրական հետազոտության մեջ նշվում է, որ Գերմանիան 1980 թվականից ի վեր երրորդ աշխարհի հետ կատարվող առեւտրում մի քանի տասնյակ միլիարդ մարկ է շահել սեփական արտահանական ապրանքների գնի բարձրացման եւ ներմուծական գների իջեցման հաշվին: Դրա հետեւանքով, զարգացող երկրներ արտահանվող ապրանքների նույն քանակության դիմաց անցյալ տարի 49 տոկոսով ավելի շահույթ ստացվեց, քան 1980 թ.: Եթե որպես հիմք ընդունենք 1980 թ. գները եւ անտեսենք անցած տասնամյակում ԳԴՀ-ի համար դրանց նպաստավոր փոփոխությունները, ապա 1992 թ. Գերմանիան նման ապրանքաշրջանառությունից ստացել է 30,9 միլիարդ մարկ զուտ շահույթ: Այդ գումարը քաղաքի գնահատվում է նույն թվականին զարգացող երկրներին ԳԴՀ-ի ցույց տված օգնության ծավալը: Դրա հաշվին ներմուծական ապրանքներ գնելիս յուրաքանչյուր գերմանացի տնտեսել է 260 մարկ:

Գերմանիայի հետ կատարվող առեւտրում հատկապես մեծ վնասներ է կրում Իրանը: Նավթի, գազեղենի եւ ոսկեղենի գների անկման պատճառով 1992 թ. նա կորցրեց 1,1 մլրդ մարկ: Նիկարագուան անցյալ տարի բանանի եւ սուրճի առեւտրից ստացավ 58,4 միլիոն մարկ: Եթե չլիներ գների անկումը, այդ երկիրը կկարողանար վաստակել 67 միլիոնով ավելի:

Նման խաղաղասիրությունից շահում են ոչ միայն հատարակ քաղաքացիները, այլեւ պետությունը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Լուրերի Հոսք

Նավթի համաշխարհային գները չեն բարձրանա

Նավթ արտահանող երկրների կազմակերպության նախագահ Ալիրիո Պատան անհավանական է համարել համաշխարհային շուկայում նավթի գների բարձրացումը Իրաքի վրա ԱՄՆ-ի հարձակումից հետո: Կարակասում լրագրողների հետ զրուցելիս նա հայտարարել է, որ Բաղդադին հրթռային հարված հասցնելու ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի որոշումը «չի դիտվում շուկային, քանի որ այն անչափ մեծ է եւ ուղղակիորեն կախված չէ իրաքյան նավթի մատակարարումներից»: Կազմակերպության նախագահի խոսքերով, նավթի գները «մնում են ցածր, բայց կայուն», կազմելով մեկ բարելի դիմաց միջին հաշվով 16,50 դոլար: Վերջին ժամանակներս գների նվազման վրա անդրադարձավ «այն զգացողությունը, թե շուկայում նավթի ծավալը գերազանցում է դրա պահանջարկը», նշել է Ալիրիո Պատան: Միեւնույն ժամանակ նավթի արտադրության առավելագույն մակարդակների վերաբերյալ կազմակերպության շրջանակներում ձեռք բերված համաձայնությունները թույլ են տալիս համաշխարհային շուկայում պահպանել կայուն գներ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Ընդունվեցին վարկավորման պայմանները

Ռուսաստանի խորհրդարանը չորեքշաբթի օրը վավերացրեց համաձայնագիր միջոցեսական բանկի ստեղծման մասին եւ ընդհանուր առմամբ որոշում ընդունեց «նախկին ԽՍՀ Միության պետությունների կառավարություններին տրվող պետական վարկերի մասին»: Խորհրդարանի որոշման համաձայն, վարկերն այսուհետեւ կհատկացվեն միջկառավարական համաձայնագրերի հիման վրա, Ռուսաստանի բյուջեում սահմանված միջոցներին համապատասխան: Ռուսաստանի կառավարությանը եւ կենտրոնական բանկին առաջարկվեց մինչեւ հուլիսի 1-ը 1992-1993 թթ. տեխնիկական վարկերի գծով նախկին ԽՍՀՄ հանրապետություններին հատկացված պարտքը վերածեւակերպել այդ հանրապետությունների պետական պարտքերի: Կենտրոնական բանկին հանձնարարվեց պարտքը ձեւակերպել մինչեւ 2000 թվականը, մարումը նախատեսելով 1995 թվականից ամենամյա անհավասար բաժիններով:

ԻՖ

Ռուբլու գոտու երկրները համակարգում են իրենց քաղաքականությունը

Ըստ իրազեկ աղբյուրներից, Ռուսաստանի ԱՊՀ երկրների հետ հանգուցակցության պետական կոմիտեն եւ կենտրոնական բանկը նախապատրաստել են ռուբլու միասնական գոտու մեջ մտնող ԱՊՀ մասնակից պետությունների ֆինանսական, դրամավարկային եւ տարադրամային հանձնայնեցված քաղաքականություն անցկացնելու պայմանագրի նախագիծը: Փաստաթղթով նախատեսվում է, որ ԱՊՀ անդամ պետությունների տարածքում վճարման միակ օրինական միջոցը ռուսաստանյան ռուբլին է: Բանկերը պետք է հաշվի առնեն Ռուսաստանի կենտրոնական բանկի հաստատած նորմատիվները: Նախագծի համաձայն, Ռուսաստանի ԿԲ-ը կսահմանի ռուբլու կուրսի կազմավորման միասնական կանոններ, կստեղծվեն բանկային հաշիվների միասնական սեժիմ, միջբանկային հաշվարկների միասնական համակարգ, բանկերում հաշիվներ բացելու եւ տարադրամային բորսաների սակարկությունների մասնակցելու սահմանափակումները հանելու ընդհանուր կանոններ: Եթե պայմանագրի մասնակից պետությունները ռուբլու հետ մտցնում են ազգային դրամ, ապա կողմերը պետք է առաջնորդվեն նրա ազատ փոխանակումը ռուբլու հետ ապահովելու հանգամանքի սահմանափակման: Ռուսաստանի կենտրոնական բանկի տնօրենների խորհրդի կազմի մեջ կմտնեն մասնակից պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի ղեկավարները: Նախատեսվում է հաստատել նախագիծը ԱՊՀ պետությունների եւ կառավարությունների ղեկավարների հերթական նիստում:

ՆՏ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Հողեցես կանխատեսում

Համաձայն ԱՄՆ հատուկ ծառայությունների տվյալների, տպագրված «Շքերն» ամսագրում, եթե տնտեսական իրադրությունը նախկին ԽՍՀՄ-ում էլ ավելի վատթարանա, եւ ազգամիջյան բախումները շարունակվեն, երբեմնի ամբողջական այդ տարածքում հնարավոր է տասներկու օբյեկտիվ պատերազմների զարգացում: Փորձագետները չեն բացառում բախումը Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ, որը կխլի 200 հազար զինվորների կյանք, 10 մլն փախստականներ կառաջացնի, 40 մլն կմահանվեն սովի, իսկ 2 մլն կմահանան համաճարակներից: Ուկրաինա-Մոլդովա պատերազմում կանխատեսվում է 67 հազար սպանված եւ 2,8 մլն փախստական: Ընդհանուր առմամբ ԽՍՀՄ նախկին տարածքում պատերազմների հետեւանքով հնարավոր է 723 հազար զինվորականների զոհ, 21,7 մլն փախստական, 88 մլն սովի մատնվածներ: Սնարֆ-Ինտերֆաքս

Չեռնարկատերերը դժկամությամբ են գնում Ռուսաստան

Գերմանիայի էկոնոմիկայի դաշնակցային նախարար Գ. Ռեկսրոդը Բոննում Ռուսաստանի նախարարների խորհրդի առաջին փոխնախագահ Օ. Լոբովի հետ զրուցելիս հայտարարեց, որ «Գերմանիան այսուհետեւ էլ կդաշտպանի Ռուսաստանի ղեկավարության բարեփոխումների կուրսը»: Ռեկսրոդը հույս հայտնեց, որ Ռուսաստանում կբարելավվեն գերմանացի ձեռնարկատերերի գործունեության պայմանները: «Վերջին ժամանակներս Ռուսաստանի օրենսդրության մեջ համախակի կատարված փոփոխությունները, ասաց նախարարը, աբեւտրի ծավալների կրճատման, Ռուսաստանի հետ կոոպերացիայի տահմանափակման պատճառներից են: Դրանք հանգեցնում են այն բանին, որ գերմանացի ձեռնարկատերերը վերջին ամիսներին դժկամությամբ են դիմում համագործակցության: Պարզ ու հասկանալի օրենսդրական հիմքի բացակայությունը վանում է նաեւ գերմանացի ներդրողներին, որոնք կկարողանային երկարաժամկետ առումով օժանդակել Ռուսաստանի տնտեսության վերելքին»:

ԱՐՄԵՆ ԴԱՎԵԼՅԱՆ-ՏԱՍՍ

«Մխեդրիոնին» փրկարարների կորուստ

Հունիսի 30-ին Վրաստանի Նախարարների կաբինետը հաստատեց հանրապետության փրկարարների կորուստի մասին կանոնակարգը, որը կազմակերպվել է Մխեդրիոնի ոչնչանացված խմբավորման անդամներից: Դեռ մեկ ամիս առաջ այդ կազմակերպության անդամների, եւ ղեկավար Տաբա Իոսելիանիի ծնողների տակ խորհրդարանը որոշում էր ընդունել այդ մասին: Մխեդրիոնցիները պահանջում էին, որպեսզի իրենց կազմակերպությունը մնի հանրապետության գործադիր իշխանության կառուցվածքներ: Հաստատված կանոնակարգի համաձայն, փրկարարների կորուստը Նախարարների կաբինետին ենթակա պետական կառավարման մարմին է: Իր լիազորությունների շրջանակներում նա կիրականացնի պետական հաղորդակցությունը, կիրառարակի հրամաններ եւ այլ ակտեր Վրաստանի օրենքների, խորհրդարանի, պետության ղեկավարի եւ Նախարարների կաբինետի որոշումների եւ կարգադրությունների հիման վրա: Փրկարարների կորուստի հիմնական պարտականությունները տարերային աղետների, արդյունաբերական վթարների, հրդեհների ժամանակ փրկարար աշխատանքների կազմակերպումն է, բնակչության եվակուացման աջակցությունը: ԻՏԱ

Ճապոնիան եւ Գերմանիան Անվտանգության խորհրդի թեկնածուներ

Նախագահ Բլինքոնի վարչությունը երեկ առաջարկեց Ճապոնիային եւ Գերմանիային ընդունել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ, 7-ի բարձրացնելով հնգանդամ այդ ակումբի անդամ երկրների թիվը:

Մշակույթ

Լավ գործ կարելի է ամեն տեղ անել

Թե՛ մինչեւ երկրաշարժը, թե՛ դրանից հետո Գյումրիի մշակութային կյանքի առանցքը եղել եւ մնում է թատրոնը: Այդի եմ անցկացնում թատրոնի այսօրվա խաղացանկը. մեծ մասամբ կատակերգություններ են: Պատահա՞կան է սա, թե ոչ: Հարցս ուղղում եմ թատրոնի երիտասարդ գեղարվեստական ղեկավար ՀԱԿՈԲ ՂԱՋԱՆՉՅԱՆԻՆ, որին հետաքրքիր ժամանակներ չեն բաժին ընկել. այդ պատճառը նա սահմանեց երկրաշարժից հետո:

– Այո, ճիշտ նկատեցիք, որ կատակերգությունները գերակշռում են: Դրա համար երկու պատճառ կա. նախ, որ մեր գյումրվա հանդիսատեսին հիմա ոչ մի լուրջ հարցավ չես զարմացնի եւ երկրորդ իմ կարծիքով, թատրոնի սոցիալական նշանակությունը այստեղ, հատկապես երկրաշարժից հետո բազմապատկվել է: Հանդիսատեսը պետք է թատրոն գա մի քանի ժամով ձերազատվելու առօրյա հոգսերից առաջացած սրբեսային վիճակից: Հուսախություն մեզ, գյումրվա հանդիսատեսը ինչպես որ առաջ է միշտ սիրել ծիծաղել, հիմա զգում է դրա կարիքը: Մինչդեռ երկրաշարժից հետո լացն ու վիշտը շատ շահարկվեցին:

– Հակոբ, ձեր ստեղծագործական գործունեությունը սկսեցիք Ղափանում, ապա եկաք Գյումրի: Նշանակո՞ւմ է սա արդյոք, որ հիշիչ մոտենում եք Երեւանին:

– Ոչ, իհարկե: Եթե ես Երեւանում ստացած լինեի մասնագիտական կրթություն, գուցե եւ ձգտեի անդայման մայրաքաղաքում տեղավորվել: Ավարտել եմ Մոսկվայի Թատերական արվեստի պետական ինստիտուտի թատերական ռեժիսորայի ֆակուլտետը: Այնտեղ հոգեբանությունն ուրիշ էր: Մայրաքաղաքում մնալու ցանկությունն էական չէր: Լավ գործ կարելի է անել ցանկացած տեղ անկախ նրանից, թե դա որտեղ է: Ավարտելուց հետո ես ունեի բոլոր նախադրյալներն ու հնարավորությունները մնալու եւ աշխատելու մեր մայրաքաղաքում: Բայց ես որոշեցի հետո գնվել: Երեւանն ինձ համար, որպես թատերական միավոր, խորթ է: Ավելին այնտեղ թատերական մթնոլորտը պղտորված է. զարմանալին այն է, որ թատերական գործիչներն ավելի շատ ուրախանում են մենի ստեղծագործական ձեռնարկի տարալուծմով, քան հաջողությամբ: Ղափանում աշխատելուս չորս տարիներն ինձ համար երջանիկ պահեր էին: Գյումրի եկա երկրաշարժից հետո, քանի որ այս քաղաքը հարազատ էր ինձ. վեց տարի սովորել եւ դպրոցն ավարտել եմ այստեղ: Իմ մեջ ցանկություն կար երկրաշարժից հետո անպայման այստեղ գնվել: Լավ էի գիտակցում, թե ինչ թատրոն է սա. Վարդան Աճեմյանի լավագույն տարիներն են կապված սրա հետ: Մեծ պատվից բացի, այն ինձ համար մեծ պատասխանատվություն է:

– Դուք հասցրել եք մի քանի բեմադրություններ անել այստեղի բեմում, առանձնացնեմ թեկուզ մեծ հաջողություն գտած Շեքսպիրի «Սիրո աղաղակում ճիգերը» ներկայացումը, այժմ էլ պատրաստվում եք բեմադրել անգլիացի դրամատուրգի «Սխալների կատակերգություն» եւ Օ'Նիլի «Սերը ծփիների տակ» պիեսները: Այս համատարած չկա-ների ֆոնի վրա արդյո՞ք հետաքրքիր է տվյալ այդ ամենը:

– Էներգետիկ ճգնաժամը երեւի արվեստի ճյուղերից ամենաշատը թատրոնի վրա է ազդում: Այս պայմաններում, իհարկե, հնարավոր չէ ոչ մի ծրագիր իրականացնել, բնականոն թատերական կյանք ունենալ: Չնայած սրան, անցնող ծմռան ցրտերին մի քանի անգամ խաղացել ենք եւ ի զարմանս մեզ դահլիճը լեփլեցուն էր: Պարզապես պարբերաբար խաղալ չի ստացվում: Ժամանակավոր ձեռք ենք բերել դիզելային շարժիչ գոնե ներկայացումների ընթացքն ապահովելու համար: Խաղում ենք միայն ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերին: Կարող եմ մի բան ասել, որ հանդիսատեսը դեռ գալիս է մեր թատրոն:

– Բայց միայն այս «տեխնիկական» պայմաննե՞րն են խանգարում, թե՞...

– Իհարկե, ոչ: Բոլորի հետ միասին մենք էլ ենք տանջվում հին օմսածում: Նաեւ զարմանում եմ, թե գերագույն խորհրդի գիտության, կրթության եւ մշակույթի հանձնաժողովը ինչով է զբաղված. խորհրդարանի կողմից առայժմ մի օրենք մշակույթի մասին ընդունված չէ: Սա թույլ է տալիս, որ ստղաշնորհները շարունակեն մնալ արվեստի օջախներում: Գեղարվեստական ղեկավարներն այսօր բացի ներկայացումներ բեմադրելուց, այլ իրավունքներ չունեն, պարադոքս է սա, բայց իրողություն:

Իմ կարծիքով, պետական բոլոր թատրոնները պետք է լուծարվեն, ապա նորից հավաքվեն: Հնարավոր է, որ դարձյալ նույն մարդիկ հավաքվեն, բայց այս անգամ գործը կազմակերպվի արդեն պայմանագրային սկզբունքով: Միակ փրկությունը սա է: Գլխավոր պրոբլեմը հավերժ աշխատողների պրոբլեմն է: Երբ մեկն ասծո օգնությամբ ընդունվել է թատրոն, դա չի նշանակում, թե նա այստեղից չ պետք է գնա:

– Հակոբ, որքա՞ն տեղյակ եմ, վերջերս դուք ձեր ուժերը փորձեցիք նաեւ կինոյի ասպարեզում նկարելով լիամետրաժ գեղարվեստական կինոնկար Էդգար Ջիգարխանյանի դասնակցությամբ: Ինչի՞ մասին էր այն:

– Առաջին գործս էր կինոյում: Ֆիլմը նվիրվել է «Հայֆիլմ» կինոստուդիայում, հոբելյանական է «Երեւան» առեւտրային բանկի Գյումրիի մասնաճյուղը (տնօրեն Արամայիս Կակոյան): Այն կոչվում է «Վերջնագիծ»: Հիմնում հոգեբանական դետեկտիվ է: Խոսվում է շատ ու շատ հարցերի մասին, որոնք մեր վերջին տարիների միջինգային ոլորտումների մեջ այնքան արդի են, եւ որոնք այսօր հսկայական ցավ են պատճառում բոլորիս: Մանրամասնորեն կիմանանք ֆիլմի էկրան բարձրանալուց հետո:

ԼԵՎՈՆ ԱՇՈՒՅԱՆ

ԱԶԳ-ՄԱՐԶԱԿԱՆ

Երվանդ Սուքիասյան. ՄԵՋ ՀԱՎԱՆԱԲԱՐ ՀԻՇԵՆ ՄԻԱՅՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Երվանդ Սուքիասյան, ծն. 1967 թ., «Արարատի» կազմում մասնակցել է ԽՍՀՄ բարձրագույն խմբի ասպետությունների 82 հանդիպման, խփել է 6 գնդակ: Ամենաշատը 3-րդ տարին է, ինչ հանդես է գալիս Կիեւի «Դինամոյի» կազմում: Այս տարի Ուկրաինայի գավառային ասպետությունում խփել է 4 գնդակ: Ուկրաինայի ազգային 1-ին ասպետության անդրանիկ գոլի հեղինակն է: Լուսագույն հատկանիշներն են. անհատական բարձր վարպետությունը, արագությունը, մեծ մարզիկին հատուկ համառությունն ու մարտական բնավորությունը, աշխատասիրությունը: Տիրապետում է բազմաթիվ արագ խաղերի:

Մեր հանդիպման լուսագույն ֆուտբոլիստներից մեկը Երվանդ Սուքիասյանը, վերջերս դարձել է Ուկրաինայի գավառային ասպետության չեմպիոն եւ գավաթակիր: Օգտվելով արձակուրդից, կարճ ժամանակով վերադարձել է հայրենիք:

– Ինչպիսի՞ն է հիմա Կիեւի «Դինամոն»:

– Շեր խնացած նույն զորեղ թիմն է, չնայած որ զգալի սերնդափոխություն է կատարվել: Բայց չկարծեմ, որ հետեւությամբ հաղթեցինք ասպետությունում: Սինչեւ վերջին պահը ոսկե մեդալների համար մեզ հետ հավասար պայքար էր մղում Դնեպրոպետրովսկի «Դնեպրը»: 3-րդ, 4-րդ եւ 5-րդ տեղերը հաջորդաբար գրաված Նախկին ԽՍՀՄ բարձրագույն խմբի ուկրաինական մյուս ներկայացուցիչները: Օրինակ՝ «Չեռնոմորեցը», Խարկովի «Մետալիստը» եւ Դոնեցկի «Շախտյորը»: Հետաքրքիր չէր նաեւ գավաթի խաղարկությունում: Եզրափակիչում անհաջող մրցակցությունից հետո 2-1 հաշվով հաղթեցինք Լվովի «Կարպատներին»:

– Ի՞նչ մակարդակ ունի Ուկրաինայի առաջնությունը:

– Ոչ մի համեմատություն Հայաստանի առաջնության հետ: Ուկրաինայի առաջնության բոլոր հանդիպումներն, առանց բացառության անցնում են շատ լարված եւ անշիգում պայքարում: Հաշվի առավելագույն տարբերությունը 3 գնդակից չի անցնում: Կարծում եմ, որ Ուկրաինայի եւ Ռուսաստանի առաջնություններն նույն մակարդակին են, չնայած երեւի Ռուսաստանի հավաքականն ավելի ուժեղ է, քան Ուկրաինայինը: Պատճառը հավանաբար այն է, որ Ուկրաինայի որոշ խաղացողներ Յուրանը, Կանչելսկիսը, Օնոպկոն ստիպված են ներկայացնել Ռուսաստանի հավաքականը, քանի որ Ուկրաինան իրավունք չունի մասնակցել 1994 թ. աշխարհի առաջնության խաղերին եւ իր ելույթները կարող է սկսել միայն 1998 թ. առաջնության ընդհանուր մրցաշարերից, իսկ յուրաքանչյուր պատվախնդիր ֆուտբոլիստ չի ուզում ժամանակն անհետեւի կորցնել:

– Եվրոպական մրցաշարերում քանի՞ թիմ է ներկայացնելու Ուկրաինան:

– Կիեւի «Դինամոն» մասնակցելու է չեմպիոնների գավաթի խաղարկությանը, Լվովի «Կարպատները» գավաթակիրների գավաթի խաղարկությանը, իսկ «Դնեպրը» հանդես է գալու ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում:

– Այս տարվա դեկտեմբերի 31-ին լրանում է Կիեւի «Դինամոյի» հետ պայմանագրի ժամանակը:

– «Դինամոն» ուզում է երկարաձգել այն, բայց ես համաձայն չեմ: Ուզում եմ խաղալ եվրոպական ֆուտբոլային հայտնի երկրներից որեւէ մեկի պրոֆեսիոնալ ակումբներից մեկում: Երբ Կիեւի «Դինամոյի» հետ տարեսկզբին Ֆրանսիայում էի եւ «Սոչի» հետ խաղում դարձա միակ գոլի հեղինակը, այդ թիմն անընդհատ հետաքրքրվում է ինձնով: Ֆրանսիական մեկ այլ թիմ «Մարսիլը», որը հաղթել է 2-րդ դիվիզիոնի 2 մրցաշարերից մեկում եւ 1-ին դիվիզիոնի ուղեգիր ձեռք բերել, նույնպես դեմ չէ հրավիրել ինձ: Ի դեպ, «Մարսիլը» ժամանակին եղել է Հայաստանում: Իմ փաստաթղթերը Կիեւում «Ֆրանս-ֆուտբոլի» հանձնահայտ թղթակից, մեր հայրենակից Ավոյի Պինտոնն է, որն իմ հարցով բանակցություններ է վարում այլ երկրների թիմերի հետ: Կիեւի «Դինամոն» նույնպես դեմ չէ իմ տեղափոխությանը, սակայն խնդիրը զումար է պահանջում ֆրանսիական թիմերից: Ի դեպ, եթե ինձ հետ կապված գործարքը տեղի ունենա ծիրեւ տարեմեջ, ապա ըստ նախապես կնքված պայմանագրի, գումարի 40 տոկոսը բաժին կհասնի «Արարատին»: Հակառակ դեպքում, «Դինամոն» որեւէ իրավունք չի ունենա իմ նկատմամբ եւ ես լիով ազատ կլինեմ իմ վճիռների մեջ:

– Հայաստան վերադառնալու ցանկություն չունե՞ս:

– Առայժմ ոչ: Ֆուտբոլային մակարդակը հիմա այն չէ, բայց պիրով հանդես կգամ մեր ազգային հավաքականում:

– Իսկ ԱՄՆ գնալու հնարավորությունից հրավեր չի՞ եղել:

– Գլխավոր մարզիչ Էդուարդ Մարգարովը հետաքրքրվել է ինձ հետ, ասելով՝ [illegible] Խայաթյանի հավաքականում [illegible] ինձ տեղավորվելու, ոչ իրեն է հանգել, սակայն մեր [illegible]ների հասցեով [illegible] չի եղել [illegible] մեկնելու համար: Ես խիստ վիրավորված եմ, նույնը Սաղիեւն ու Վարդանը: Կարող են պատճառաբանել, թե [illegible] մեր դիրքորոշումը մեկ ամսով էր եւ մեր թիմերը զվար թե համաձայնվեին: Թող պաշտոնական գրություն լիներ, [illegible] մեր [illegible], դա այլ բան կլիներ: Ես չէ, ի՞նչ է ստացվում. ընկերական խաղերին մեզ չեն հրավիրում, իսկ պաշտոնական խաղերին ստիպված կլինեն մտաբերել: Բայց եթե այն ժամանակ էլ մենք փորձենք [illegible], ապա ոմանք մեզ դատապարտի [illegible]: Ինչպես էլ որ դասավորվի մեր [illegible] կարիերան, մեր գլխավոր նպատակն է բարձր պահել հայկական ֆուտբոլի [illegible]: ■

Արգենտինան, թե Մեխիկան

Ամերիկայի գավաթի խաղարկությունը, իր կարեւորությամբ ֆուտբոլային 3-րդ մրցաշարն է հանդիսանում աշխարհի առաջնությունից եւ օլիմպիական խաղերից հետո: Էկվադորում ավարտող մրցաշարը 36-րդն է: 13 անգամ հաղթել է Արգենտինայի հավաքականը, որը բոլոր հիմքերն ունի գավաթին տիրելու նաեւ 14-րդ անգամ: Արգենտինացիները կիսաեզրափակիչում 11 մետրանոց հարվածների շնորհիվ 6-5 հաշվով հաղթեցին Կոլումբիայի հավաքականին (խաղի հիմնական եւ լրացուցիչ ժամանակն ավարտվել էր ոչ-ոքի 0-0) եւ եզրափակիչում մրցելու են Մեխիկայի հավաքականի հետ, որը մրցել այդ 2-0 հաշվով առավելության էր հասել Էկվադորի հավաքականի նկատմամբ: ■

Քառյակը հայտնի է

EURO 93 BASKETBALL

Բասկետբոլի տղամարդկանց Եվրոպայի առաջնության 1/4 եզրափակիչում Ռուսաստանի հավաքականը 82-61 հաշվով հաղթեց Էստոնիայի հավաքականին եւ ձեւավորվեցին կիսաեզրափակիչում Ռուսաստանի հավաքականի մրցակիցն էր Խորվաթիայի հավաքականը, որը 1/4 եզրափակիչում 20 միավորի տարբերությամբ առավելության հասավ Բոսնիա-Հերցեգովինայի հավաքականի նկատմամբ: Գերմանիայի եւ Իսպանիայի հավաքականների մրցավեճի հիմնական ժամանակն ավարտվեց ոչ-ոքի: Լրացուցիչ ոլորտում 79-77 հաշվով հաղթեցին Գերմանիայի հավաքականը: Իսկ Հունաստանի ընտրանին, որը հանդես գալիս առանց իր առաջատար Նիկոս Գալիսի, Ֆրանսիայի հավաքականի դեմ հանդիպման ավարտից միայն 2 վարկյան առաջ կարողացավ վճռական նետում կատարել եւ հաղթել 61-59 հաշվով:

Մեկ մյուս կիսաեզրափակիչում մրցելու նաեւ Գերմանիայի եւ Հունաստանի հավաքականները: ■

digitised by A.R.A.R.@

ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ

«ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍԸ» ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ Է

Այդ կապակցությամբ հուլիսի 8-ին «Արմենիա» հյուրանոցում կազմակերպվում է ժապցի տոն.

1. Ծաղկահարդարների մրցույթ.
2. Նորաձևության ֆիրմաների մանեկենների ծաղկային ձևավորումների շոու.
3. Հաճելի անակնկալներ
4. Երաժշտություն
5. Կընտրվի ծաղկի տոնի «Միսս Բրաբիոնը»
6. Մրցանակներ և իհարկե ծաղիկներ, ծաղիկներ:

ՇՈՒՆ ՎԱՐՈՒՄ Է «ՇԱՐՄ»-Ը:
Այս ամենի տեսագրությունը կարող եք դիտել հուլիսի 9-ին 3-րդ ալիք հեռուստաթերթով:

PUBLISET

ՎԱՐՁՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Առաջարկվում է երեք սենյականոց կահավորված, բարեկարգ բնակարան բոլոր հարմարություններով, ընդարձակ խոհանոց, բուխարի, Նալբանդյան փողոցի վրա:

ՎԱՐՁԸ ՏԱՐԱԴՐԱՄՈՎ

52-24-17

Հայտարարություն

Վաճառվում են 2 և 3 սենյականոց բնակարաններ Մերյմոսկվայում (Մոսկվայից 9 կմ հեռու), նոր շենքում:

Հեռախոս

(095) 2974388, 2973111

Անշարժ գույքի և արժեթղթերի հայկական բորսա:

Հեռախոս

25.27.89 25.46.67

NORINVEST

«ՆՈՐԻՆՎԵՍՏ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ համար շեռնտու պայմաններով առաջարկում է

կոմպյուտերային տեխնիկայի ու գյուղատնտեսության հետ կապված մի շարք նոր նախագծեր:

Մենք իրավիրում ենք ինչպես մեր մշտական իրավատերերին, այնպես էլ նոր մասնակիցներին:

ԴՈՒՔ ՉԵՔ ԱՓՈՍԱԿ, ՈՐ ՎԱՏԱՀԵԼ ԵՔ ՄԵԶ

Մեր հասցեն նույն է
Աբովյան 14, 100 սենյակ: հեռախոս 56-19-31

«ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՎԻՍ»

տուրիստական ֆիրման առաջարկում է անհատական և խմբային նոր արտասահմանյան շրջագայություններ

Լիբանան	7 օր	(Երևան-Բեյրութ-Երևան)
Հարավային Կորեա	6 օր	(Երևան-Սեուլ-Երևան)
Հորդանան	7 օր	(Երևան-Ամման-Երևան)
Սիրիա	7 օր	(Երևան-Դամասկոս-Երևան)
Հունաստան	4 օր	(Երևան-Աթենք-Երևան)
Իտալիա	4 օր	(Երևան-Վենետիկ-Երևան)

✔ Բոլոր ուղերթները կատարվում են «Ռուսական ավիագծեր» ավիաընկերության հարմարավետ օդանավերով:
✔ Ելի փաստաթղթերի և մուտքի այցագրերի ձեռակերտումը՝ ամենասեղմ ժամկետներում:
✔ Խմբային զբոսաշրջիկներին զեղչ է տրվում:
✔ Շրջագայության արժեքի մեջ մտնում են ինքնաթիռի տոմսը, հյուրանոցում հանգիստը, սնունդը, որոշակի քանակության ուղեթերթի և ավելի փոխադրումը, օրական ավտոբուսանում դիմավորումը և հրաժեշտը

Լրացուցիչ տեղեկություններ՝ հեռ. 52-31-51 հեռախոսահամարներում
Ծիրանի հասցեն՝ Երևան, Բրյուսովի 28, 3-րդ հարկ

KILIKIA T. T. S.

«Կիլիկիա - S.S.U.» - ընկերությունը առաջարկում է վարկերի ընդունման նոր տարբերակ.

Երկարաժամկետ վարկերի դիմաց վճարվում է

50% 3 ամսյա պայմանագրի դեպքում
120% 6 ամսյա պայմանագրի դեպքում
300% 1 տարվա պայմանագրի դեպքում

Կնքված պայմանագրերը մնում են ուժի մեջ:

Սայաթ-Նովայի պող. «Անի» հյուրանոց, 7-րդ հարկ, 730, 736 սենյակ
Վարկերի ընդունումը կատարվում է ժամը 10⁰⁰-ից 14⁰⁰-ը երեքշաբթի, չորեքշաբթի և հինգշաբթի օրերը:

Հեռ. 58-11-10, 59-43-70

PUBLISET

ԵՐԵՎԱՆ-ՍԵՐՎԻՍ

Ընկերությունը առաջարկում է տուրիստական ուղևորություն ուղիղ չվերթով

1. Երևան-Ամման (Հորդանան) 7 օր
2. Երևան-Ամման-Հալեպ 3 օր Ամման. 4 օր Հալեպ
3. Երևան-Հալեպ 7 օր
4. Երևան-Արաբական Էմիրություններ 7 օր

Պայմաններին ծանոթանալու համար զանգահարել հեռ. 52.45.12. 52.99.48:



Լուսանկարչություն

Ռուսաստանն առաջինը վերսկսի միջուկային փորձարկումները

Նախագահ Ելցինը հայտարարեց, թե «մեր նպատակն է այնպես վերափոխել միջուկային փորձարկումների սառեցման ընթացքը, որ նրան միանա ամբողջ «միջուկային հնգյակը»: Հունաստանից Մոսկվա վերադառնալուց հետո Բորիս Ելցինն ասաց. «Այժմ շատ կարևոր է չսկսել սառեցման հետընթացը, այլ անել այնպես, որ ոչ մի միջուկային տերություն չսկսի փորձարկումներ: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, նա առաջինը չի սկսի»: ԻՏ

Կրավչուկը պարզ է արտահայտվում

Որքը գործակալությունը Կիևից հաղորդել է. «Ուկրաինայի նախագահ Կրավչուկը Սլովակիայի նախագահ Կովաչի հետ անցկացրած մամուլի ասուլիսում Սեւծովյան նավատորմի սպաներին նախազգուշացրեց, որ կամ նրանք կընդունեն Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ նավատորմի կիսման համաձայնագիրը, կամ էլ հրաժարական կտան: Նավատորմը ծառայում է պետությանը եւ ոչ թե հակառակը, ասաց նա: Եթե սպաներից ոմանք համաձայն չեն երկու նախագահների որոշմանը, խաղաղակիր երկրներում նրանց միակ ուղին հրաժարականն է»

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Խթանում են ադրանմարտադրողներին

Ռուսաստանի ԳԽՆ որոշում ընդունեց «Ադրանմարտադրողներից գանձվող հարկաչափի կրճատման մասին» Նախարարների խորհուրդը մինչեւ սեպտեմբերի 1-ը պետք է գնա այն խորհրդի ենթակայանը ներկայացնի իր առաջարկները հարկային համակարգում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու ուղղությամբ, խթանելու ադրանմարտադրողների գործունեությունը: ԻՏ

Քարիմովը ճնշադատում է Ռուսաստանին

Ուզբեկստանի նախագահ Ռուստամ Քարիմովը ճնշադատեց ռուսական խաղաղակարությունը, որը ուղղված է «ռուբլու գոտուց մյուս պետությունների դուրսմղմանը, ինչը բացասաբար կանդրադառնա այդ հանրապետությունների տնտեսության վրա»: Միեւնույն ժամանակ նա ընդգծեց, որ ազգային դրամական միավորի ներմուծումը հեղափոխական քայլ է, եւ ռուբլու գոտուց դուրս գալու համար պետք է խորը կբռնադատել ամեն ինչ: ԻՏ

ՌԴ կառավարությունը պահանջում է բյուջեն հասատել

Ռուսաստանի կառավարությունը 20 տոկոս կրճատմամբ խորհրդարան հրեց 1993 թ. ֆինանսական տարվա բյուջեն, պահանջելով այն հաստատել նույնությամբ: 20 տոկոսի կրճատումը վերաբերում է սոցիալական հատկացումների մարզին: Ռուսաստանի էկոնոմիկայի նախարար Բորիս Ֆեդորովն ասաց նաեւ, որ բյուջեն չհաստատելու դեպքում երկրում ծայր կառնեն գործադուլները, հանգի մարդիկ կզրկվեն իրենց աշխատավարձից Ռ

Հրատարակիչ՝ հայտարարություն
«Լեգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՅԱՍՈՒՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ / 581841

Տպարան՝
ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863

Apple Macintosh
համակարգչային ծառայություն
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutiun st.,
Yerevan, Armenia 375010

Գերթ՝ ձեռագրված եւ տպագրության հանձնվել է՝ Պավել ԴԱԼԼԱՔՅԱՆ

Ստորագրված է տպագրության՝ 2.7.1993

Պատվեր 1534 Տպաքանակ 38000. Գին պայմանագրով Դասալ 69149 Գ անգամ թիվ 65.

digitised by A.R.A.R.@